Աջակցություն Հայաստանի Ազգային Վիճակագրական Ծառայությանը
Թվինինգ ծրագրի միջոցով

AM09/ENP-PCA/TP/04

Առաքելության Զեկույց

Գյուղատնտեսության Համատարած հաշվառում

Գործունեություն Դ.4
Տարածքային տեսակետները և սխալների ուղղումը

Առաքելությունը իրականացրել են՝
Մոնա Լարսեն, Դանիայի Վիճակագրություն
Ռոլֆ Սելանդեր, Շվեդիայի Վիճակագրություն

Հայաստան, 25-29 Հունիսի 2012

Տարբերակ՝ վերջնական տարբերակ

National Statistical Service Republic of Armenia	Statistiska centralbyrån Statistics Sweden	STATISTICS DENMARK

Հեղինակների անունները, հասցեն, էլ. փոստի հասցեն

Մոնա Լարսեն
Sejrøgade 11
ԴԿ-2100 Կոպենհագեն Ø
Դանիա
Հեռ. +45 39 17 33 99
mla@dst.dk

Ռոլֆ Սելանդեր
ՇԵ-701 89 Örebro
Շվեդիա
Հեռ. +46 1917 6627
Rolf.selander@scb.se

Բովանդակությունների ցանկ

Ամփոփ նկարագիր 4
1. Ընդհանուր մեկնաբանություններ 5
2. Արդյունքներ և եզրակացություններ 5
2.1 Հարցաթերթիկ և հրահանգներ 5
2.2 ԳՀՀ-ի հետ առնչվող այլ հարցեր 7
2.2.1 Համակարգումը ԱՄՆ ԳԴ-ի աջակցության հետ 7
2.2.2 Հարցաթերթիկի դաշտային փորձարկումները 8
2.2.3 Մարդահամարի փորձը 8
2.2.4 Սեմինար տարածքային գործակալությունների համար 9
2.2.5 Հանդիպում ՀՀ ԳՆ/ՀՀ ԱՎԾ համատեղ աշխատանքային խմբի հետ 10
2.2.6 Փորձնական Գյուղատնտեսության համատարած հաշվառում 10
3. Առաջարկություններ 11
4. Գործողությունների իրականացում նախքան հաջորդ առաքելությունը 12

Հավելվածներ
Հավելված 1.Տեխնիկական առաջադրանք 13
Հավելված 2. Առաքելության ծրագիրը 15
Հավելված 3. Անձինք, որոնց հետ հանդիպումներ են տեղի ունեցել 16
Հավելված 4. Ծրագրի հետագա ժամանակահատվածի ժամանակացույցը և աշխատանքային ծրագիրը 17
Հավելված 5.Մարդահամարի նկարագիր աղյուսակները (ձևանմուշ) 19
Հավելված 6. Առաջարկություններ հարցաթերթիկի վերաբերյալ 20
Հավելված 7. ԳՀՀ-ի հարցաթերթիկը, նախագծի տարբերակ 25 Հունիսի, 2012 29
Հավելված 8. ԳՀՀ Հայաստանում – հայեցակարգային փաստաթղթի ներդրում 37

Զեկույցի արտաքին հավելվածներ
Հավելված Դ 4.9 ԳՀՀ Հայաստանի համար – Տվյալների որակին առնչվող հարցեր (Power Point)

Հապավումների ցանկ

ԳՀՀ	Գյուղատնտեսության համատարած հաշվառում
ՀՀ Դրամ	Հայկական դրամ
ՇԵ	Շահառու երկիր (Հայաստան)
ԵՄ	Եվրոպական Միություն
ՏԿՀ	Տնտեսության Կառուցվածքի հետազոտություն ԵՄ անդամ պետություններում
ՀՀ ԳՆ	ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն
ԱՊ	Անդամ Պետություն
ՀՀ ԱՎԾ	ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն
ԲՄ	Մարդահամար
ԱՄՆ ԳԴ	ԱՄՆ Գյուղատնտեսության դեպարտամենտ

Ամփոփ նկարագիր

Առաքելության ընթացքում ԱՊ փորձագետները ունեցել են բավականին արդյունավետ քննարկումներ ՇԵ փորձագետների հետ Գյուղատնտեսության համատարած հաշվառման (ԳՀՀ) պլանավորման և ԳՀՀ հարցաթերթիկի վերաբերյալ: Քննարկումները հիմնականում իրականացվել են ԱՄՆ գյուղդեպարտամենտի փորձագետ Մայքլ Ստայների մասնակցությամբ:

Սույն զեկույցում շարունակվում են նախորդ առաքելության ժամանակ իրականացված քննարկումները (գործունեություն Դ. 3) օրինակ, երբ հարցը վերաբերվում է հարցաթերթիկի հարցերի բարելավմանը, պարզեցմանը, կամ նույնիսկ որոշ հարցերի հանմանը, իսկ որոշ դեպքերում նաև այլ հարցերի ավելացմանը: Քննարկումների հիմք է հանդիսանում հարցաթերթիկի դաշտային փորձարկումների փորձը և հիմնական սպառողի՝ ՀՀ ԳՆ կողմից տվյալների անհրաժեշտության վերաբերյալ հետագա գիտելիքները:

ԱՊ փորձագետները տրամադրել են իրենց առաջարկությունները, թե ինչպես պետք է հստակեցնել հարցաթերթիկը և շեշտել են հարցազրուցավարների հրահանգների վերաբերյալ աշխատանքների անհրաժեշտությունը և հարցազրուցավարների համար ուսուցողական նյութերի պատրաստումը, որը պետք է իրականացվի հարցաթերթիկի աշխատանքների հետ համատեղ:

Առաքելության առաջին օրը կազմակերպվել էր հանդիպում ԱՄՆ ԳԴ-ի ներկայացուցիչ Մայքլ Ստայների հետ: Հանդիպման հիմնական նպատակն էր վերանայել այն բոլոր հարցերը, որոնք պետք է քննարկվեին առաքելության ընթացքում և նախապատրաստվել ՀՀ ԳՆ և ՀՀ ԱՎԾ-ի համատեղ աշխատանքային խմբի չորրորդ հանդիպմանը ԳՀՀ-ի վերաբերյալ:

ՀՀ ԳՆ/ԱՎԾ համատեղ աշխատանքային խմբի հանդիպումը ԳՀՀ-ի վերաբերյալ կենտրոնացված էր երկու հարցերի շուրջ՝ տվյալների անհրաժեշտությունը և ԳՀՀ-ի այսպես կոչված ռազմավարական փաստաթուղթը: ԳՆ –ը հստակեցրեց, որ մանրամասն տեղեկատվությունը չօգտագործված հողերի վերաբերյալ շատ կարևոր է: Որոշվեց, որ ռազմավարական փաստաթուղթը պետք է պատրաստվի բյուջեյի այլընտրանքներով:

Սեմինարը ՀՀ ԱՎԾ-ի տարածքային գործակալությունների մասնակցությամբ կազմակերպվել էր Հունիսի 27-ին: Թեման Հայաստանում գյուղատնտեսական համատարած հաշվառումն էր և տվյալների որակի հարցերը: Մասնակիցներին ներկայացվեց շնորհանդես ԳՀՀ-ի պլանավորման ներկայիս իրավիճակի վերաբերյալ, որակի վերաբերյալ հիմնական հարցերը, ինչպես նաև նրանց հնարավորություն տրվեց ներկայացնել իրենց տեսակետները ԳՀՀ-ի կազմակերպման հնարավոր բարելավումների վերաբերյալ:

ՀՀ ԱՎԾ Մարդահամարի վարչության հետ հանդիպման ժամանակ ԱՊ փորձագետներին ներկայացվեց տեղեկատվություն 2011 թվականի Մարդահամարի փորձի վերաբերյալ, որը կարող է համապատասխանել ԳՀՀ-ի համար: Պետք է ճշտվի, թե արդյոք հնարավոր է Մարդահամարի տվյալներից իրականացնել գյուղատնտեսության վերաբերյալ որոշ տվյալների մշակում նախատեսված պլանից ավելի վաղ, որպեսզի հնարավոր լինի ստանալ

գյուղատնտեսության վերաբերյալ պատկերը: Դա չափազանց կարևոր կլինի ԳՀՀ-ի հետագա պլանավորման համար (ընտրանքի հարցեր, բյուջեյի նախահաշվարկ և այլն):

1. Ընդհանուր մեկնաբանություններ

Սույն զեկույցը պատրաստվել է <<Աջակցություն Հայաստանի Ազգային Վիճակագրական ծառայությանը>> Թվինինգ ծրագրի բաղադրիչ Դ-ի շրջանակներում ՀՀ ԱՎԾ-ում ԱՊ փորձագետների իրականացրած առաքելության արդյունքում: Առաքելությունը վերաբերվում էր Հայաստանում Գյուղատնտեսության համատարած հաշվառման տարածքային տեսակետներին և սխալների ուղղումների հարցերին:

Գործունեության (Դ.4) նպատակն է սկսել բաղադրիչի աշխատանքների վերջնականացման գործընթացը՝ հստակ հղում անելով ծրագրի պարտադիր արդյունքներին:

Առաքելության նպատակները նշված են Հավելված 2-ում:

ԱՊ փորձագետները ցանկանում են իրենց երախտագիտությունն արտահայտել բոլոր այն պաշտոնատար անձանց և անհատներին, որոնց հետ իրենք հանդիպումներ են ունեցել՝ վերջիններիս ցուցաբերած բարյացակամ աջակցության և արժեքավոր տեղեկատվության համար, որը տրամադրվեց նրանց Հայաստանում գտնվելու ընթացքում և մեծապես նպաստեց իրենց աշխատանքներին: Սույն զեկույցում նշված տեսակետները և դիտողությունները պատկանում են ԱՊ փորձագետներին և դրանց համապատասխանությունը Դանիայի Վիճակագրության և Շվեդիայի վիճակագրության տեսակետների հետ բոլորովին պարտադիր չէ:

2. Արդյունքներ և եզրակացություններ

2.1 Հարցաթերթիկ և հրահանգներ

Մասնավորապես ԳՀՀ-ի հարցաթերթիկի նոր դաշտային փորձարկումից հետո, որը իրականացվել էր 2012 թվականի Մարտի 27-28-ը և ՀՀ ԱՎԾ տարածքային գործակալությունների համար կազմակերպված սեմինարից հետո (նաև ԱՄՆ գյուղդեպարտամենտի ներկայացուցչի մասնակցությամբ), ԱՊ փորձագետները ունեն հետագա առաջարկություններ հարցաթերթիկի ձևափոխման վերաբերյալ: Հատկապես այն պատճառով, որ գոյություն ունեն ազգային պահանջներ, որոնք պետք է հաշվի առնել նոր հարցաթերթիկի կազմման ժամանակ:

Սա հատկապես վերաբերվում է չօգտագործված հողատարածքներին, որը կարևոր հարց է Գյուղատնտեսության նախարարության համար (ԳՆ): Այլ հարցեր, որոնք պետք է հաշվի առնել վերաբերվում են երկրորդական մշակաբույսերին, տնամերձ հողերին և ֆերմային/տնտեսությանը/ պատկանող հողերի որոշմանը:

Ինչ վերաբերվում է հողերին պետք է որոշում կայացվի այն հողատարածքների վերաբերյալ, որոնք չեն պատկանում որևէ մեկին կամ որևէ մեկը տեղյակ չէ, թե ով է հանդիսանում այդ հողերի սեփականատերը, սակայն դրանք օգտագործվում են գյուղատնտեսական

նպատակներով: ԱՊ փորձագետները առաջարկում են, որ այն ֆերմերը, որը օգտագործում է այդ հողատարածքը նա էլ պետք է միշտ հաշվետու լինի դրանց համար: Որոշ հարցեր, հատկապես հարցեր, որոնք վերաբերվում են աշխատաժամերին, շատ բարդ են կառուցվածքի/կազմման առումով, և հետևաբար ֆերմերների համար դժվար է դրանց պատասխանելը: Ուստի չափազանց կարևոր է մշակել լավ հրահանգներ հարցազրուցավարների համար:

ԱՊ փորձագետները առաջարկում են, որ ՀՀ ԱՎԾ գյուղատնտեսության բաժնի կողմից անհրաժեշտ է կենտրոնացված ձևով մշակել ստանդարտ վերապատրաստման նյութեր: Այդ նյութերը, որոնք կներառեն օրինակ շնորհանդեսներ (տպագիր նյութեր) պետք է հիմք հանդիսանան բոլոր վերապատրաստումների համար տարածքային գործակալություններում, որպեսզի ելակետային բոլոր տեղեկատվությունը միևնույնը լինի:

Առաջարկվում է ավելի շատ սեմինարներ կազմակերպել ՀՀ ԱՎԾ տարածքային գործակալությունների համար՝ օգտագործելով ինչպես Մարդահամարի փորձը, այնպես էլ տեղեկանալ և կիսել առավել կոնկրետ տեղեկատվություն գյուղատնտեսության վերաբերյալ երկրի տարբեր տարածաշրջաններում և տեղեկանալ, թե ինչպիսի մարտահրավերներ պետք է ակնկալել համապատասխան տեղեկատվության հավաքագրման ընթացքում:

Ընդհանուր առմամբ, միանման բարձր որակի տվյալներ ունենալու համար կարևոր է բոլոր ներգրավված կողմերի միջև, հատկապես հարցազրուցավարների և հարցազրուցավարների հրահանգիչների շրջանում ապահովել հարցաթերթիկի ընդհանուր հասկացվածություն և փոխանակել փորձը հատուկ դժվար մասերի վերաբերյալ:

ԱՊ փորձագետները չեն կարող չշեշտել բոլոր փոփոխականների հստակ սահմանումների և երկակի իմաստ չունեցող վերնագրերի կարևորությունը՝ կապված հարցաթերթիկի հաշվետու ժամանակահատվածի հետ: Այնուամենայնիվ կարող են կասկածներ ի հայտ գալ մեկ կամ մի քանի հարցերի վերաբերյալ՝ տվյալների հավաքագրման ընթացքում, ուստի պետք է կապ ստեղծել հարցազրուցավարների – կամ ղեկավարների և ՀՀ ԱՎԾ-ի միջև՝ հարցաթերթիկի վերաբերյալ ի հայտ եկած հարցերը հղելու համար:

ԱՊ փորձագետները նշեցին այն ինչ արդեն ասվել էր նախորդ առաքելության ժամանակ, որ հարցաթերթիկի մշակումը պետք է իրականացվի հրահանգների/հաշվարարների ձեռնարկի հետ միաժամանակ: Հետևյալ երեք մասերը կրկնվում են նախորդ առաքելության զեկույցից (Գործունեություն Դ.3, Նոյեմբեր, 2011)

1 Տեղեկատվությունը պետք է հավաքագրվի հարցազրուցավարների միջոցով, ինչը ենթադրում է, որ ֆերմերները պարտադիր չէ, որ տեսնեն բուն հարցաթերթիկը և որպես այդպիսին կարևոր է, որ հարցաթերթիկը լիովին հասկանալի լինի հարցազրուցավարների համար, որպեսզի վերջիններս վարեն իմաստալից հարցազրույցներ և կարողանան ֆերմերներին այնպես ներկայացնել հարցերը, որ նրանք պատասխանեն այդ հարցերին առանց որևէ թյուրիմացությունների: Դա նաև նշանակում է, որ հարցազրուցավարները պետք է պատրաստ լինեն անհրաժեշտության դեպքում <<մեկնաբանել>> հարցաթերթիկի հարցերը առօրյա ըմբռնելի բառերով:

2 ԱՊ փորձագետները մեծ կարևորություն են տալիս հարցազրուցավարների հրահանգներին՝ մասնավորապես կենտրոնանալով բարդ հարցերի վրա, և հրահանգները պետք է ներառեն նաև հնարավոր խնդիրների օրինակներ, ինչպես նաև

ներկայացնեն դրանց լուծումները: Ուստի, ԱՊ փորձագետների կողմից առաջարկվում է, արդեն իսկ ձեռնարկել օրինակների հավաքումը, որոնց մի մասը կարող է օգտագործվել հրահանգների մեջ, սակայն դրանք կարող են նաև կիրառվել հարցազրուցավարների վերապատրաստման ընթացքում:

3 ԱՊ փորձագետները խորհուրդ են տալիս ՇԵ փորձագետներին ուսումնասիրել այլ երկրների ձեռնարկները/հրահանգները ԳՀՀ ոգեշնչման համար: ԱՊ փորձագետները առաջարկում են երկու ձեռնարկ Սերբիայի և Մոլդովայի հանրապետություններից, որոնք կարող են օգտակար ոգենշնչման աղբյուր հանդիսանալ, քանի որ երկուսն էլ ներառում են օրինակներ, որոնք հնարավոր է օգտագործել Հայաստանի համար:

ԱՊ փորձագետների գիտելիքները այս աշխատանքում նոր է նախաձեռնվել և ԱՊ փորձագետների կարծիքն այն է, որ ժամանակը սուղ է հարցազրուցավարների պատշաճ հրահանգների մշակման առումով Թվինինգ ծրագրի իրականացման ժամանակահատվածի ընթացքում: Խորհուրդ չի տրվում հետաձգել հրահանգների մշակումը մինչև վերջնականին մոտ հարցաթերթիկ ունենալը: Ընդհակառակը, առաջարկվում է խիստ առաջնահերթություն տալ հարցազրուցավարների հրահանգներին: Ավելին, առաջարկվում է, որպես հիմք ընդունել Մոլդովայի փորձը և հնարավորինս ընդօրինակել: Մոլդովայի Գյուղատնտեսության համատարած հաշվառման հարցազրուցավարների հրահանգները հասանելի են ինչպես ռուսերեն, այնպես էլ անգլերեն լեզուներով:

Հարցաթերթիկի ներկայիս նախագծի վերաբերյալ մանրամասն առաջարկությունները նշված են Հավելված 6-ում:

2.2 Գյուղատնտեսության համատարած հաշվառման հետ առնչվող այլ հարցեր

2.2.1 Համակարգումը ԱՄՆ գյուղդեպարտամենտի աջակցության հետ

Առաջին օրը հանդիպում էր կազմակերպվել Թվինինգ ծրագրի ԱՊ փորձագետների և ԱՄՆ գյուղդեպարտամենտի խորհրդատու Մայքլ Ստայների հետ: Որոշվեց, որ խորհրդատուների նախատեսված գործողությունների մեծ մասը ցանկալի է իրականացնել Մայքլ Ստայների հետ միասին:

Համագործակցության ամենակարևոր հարցերից մեկը հարցաթերթիկի/հրահանգների մշակումն էր՝ հաշվի առնելով մարտ ամսին իրականացված դաշտային փորձարկումների արդյունքները և ՀՀ ԱՎԾ-ի կողմից մշակված ռազմավարական փաստաթղթի հնարավոր բարելավումը՝ <<Հայաստանում գյուղատնտեսության համատարած հաշվառման իրականացման անհրաժեշտությունը>>

Հարցաթերթիկի հնարավոր փոփոխությունները արդեն նշված են սույն զեկույցի 2.1 բաժնում և մանրամասն առաջարկությունները ներկայացվում են Հավելված 6-ում: Ռազմավարական փաստաթղթի համար անհրաժեշտ է ավելացնել ժամանակացույց և բյուջեյի այլընտրանքներ տարբեր մոտեցումներով: Վերջինիս համար կարող է օգտակար լինել Թվինինգ ծրագրի շրջանակներում իրականացված աշխատանքների մի մասը՝ օգտվելով <<Հայաստանի Գյուղատնտեսության համատարած հաշվառման հայեցակարգային փաստաթղթի ներդրումից>> (Հավելված 8)

2.2.2.Հարցաթերթիկի դաշտային փորձարկումները

2012 թվականի մարտ ամսին փորձարկվեց հարցաթերթիկի առաջին նախագիծը գյուղացիական տնտեսությունների համար, որն իրականացվեց տարբեր մարզերի երկու գյուղերում: Հավանաբար հետագայում կմշակվի առանձին հարցաթերթիկ քաղաքաբնակների տնտեսությունների համար և ամառանոցների սեփականատերերի համար, ինչպես նաև առանձին հարցաթերթիկ ձեռնարկությունների համար:

Դաշտային փորձարկումների փորձը պաշտոնապես չի փաստաթղթավորվել, սակայն ամեն ինչ հաշվի է առնվել հարցաթերթիկի նոր նախագիծը մշակելիս: Որոշ դժվարություններ ի հայտ եկան, երբ ռեսպոնդենտներին անհրաժեշտ էր բացատրել, որ անհրաժեշտ է նշել բոլոր այն հողերը, որոնք վարվում են տնտեսության կողմից, ներառյալ վարձակալված հողերը: Նաև պետք է ներկայացնել գյուղատնտեսության նպատակներով չօգտագործվող հողերը:

Նոր դաշտային փորձարկում միևնույն մոտեցմամբ ինչպես իրականացվել էր մարտ ամսին նախատեսվում է իրականացնել 2012 թվականի օգոստոս/սեպտեմբեր ամիսներին արդեն հարցաթերթիկի նոր նախագծային տարբերակով, որը պետք է վերջնական տեսքի բերվի հուլիսի վերջին: Հարցաթերթիկի նոր նախագծի համար նախատեված կոնկրետ փոփոխությունները հետևյալն են՝

- ներկայացվող հողատարածքների պարզաբանում
- չօգտագործվող հողեր
- տնամերձ հողեր
- երկրորդական մշակաբույսեր և
- աշխատուժի աղյուսակի կառուցվածքը
- գյուղատնտեսական արտադրանքի իրացում

2.2.3 Մարդահամարի փորձը

Մարդահամարը իրականացվել է 2011 թվականի հոկտեմբեր ամսին: Տվյալների մուտքագրումը շարունակվելու է մինչև 2012 թվականի հուլիսի վերջ, որից հետո խմբագրման և արդյունքների վավերացման աշխատանքները կտևեն մոտ երեք ամիս: Որոշակի նախնական արդյունքներ մարզերի մակարդակով նախատեսվում է հրապարակել 2012 թվականի հոկտեմբերին: Այս առաջին հրապարակման մեջ ներառված չեն հարցաթերթիկի գյուղատնտեսության հատվածի արդյունքները: Ըստ ներկայիս պլանի գյուղատնտեսության վերաբերյալ տվյալները հասանելի կլինեն տվյալների բազայում 2013 թվականի երկրորդ կեսին: Գյուղատնտեսության հատվածի ելքային աղյուսակները պլանավորվել են ՀՀ ԱՎԾ գյուղատնտեսության բաժնի հետ միասին:

Մարդահամարի փորձը/արդյունքները շատ համապատասխան կլինեն ԳՀՀ-ի պլավորման համար երկու տեսանկյունից: Նախ այն, որ պետք է ուսումնասիրվի, թե ինչպես կարող է ընդօրինակել մարդահամարի ենթակառուցվածքները համապատասխանաբար: Երկու հետազոտությունների գործողություններից շատերը միանման են, տվյալների հավաքագրման կազմակերպումը, հանրային կապերի գործողությունները, վերապատրաստում, տվյալների մուտքագրումը և այլն: Մարդահամարի փորձը նաև արժեքավոր կլինի ԳՀՀ-ի բյուջեյի հաշվարկման համար: ԱՊ փորձագետները խրախուսում և առաջարկում են սերտ

համագործակցություն ՀՀ ԱՎԾ-ի Մարդահամարի և Գյուղատնտեսության վիճակագրության բաժինների միջև այս բոլոր հարցերի վերաբերյալ:

Երկրորդը, որ Մարդահամարի արդյունքները լավ հիմք կհանդիսանան ստանալ գյուղատնտեսության վիճակագրության ընդհանուր պատկերը և նաև հիմք կհանդիսանան ԳՀՀ-ի հնարավոր ընտրանքի մոտեցումների վերլուծությունների համար: Բյուջեյի տարբեր այլընտրանքներ կարող են որոշ չափով ներառել մասնակի ընտրանքի իրականացումը <<փոքր միավորներից>>:

Խնդիրն այն է, որ Մարդահամարի գյուղատնտեսության հատվածի տվյալների մշակումը առաջնային չի համարվում: Թվինինգ ծրագրի իրականացման ընթացքում գյուղատնտեսության տվյալների օգտագործման համար անհրաժեշտ է, որ այդ տվյալները հասանելի լինեն առավելագույնը այս տարվա հոկտեմբեր ամսին: ՇԵ բաղադրիչի ղեկավարը այս հարցը կբարձրացնի ՀՀ ԱՎԾ նախագահի մոտ:

Մարդահամարի արդյունքներով աղյուսակները, որոնք հետաքրքրություն են ներկայացնում ԳՀՀ-ի պլանավորման տեսանկյունից ներկայացված են Հավելված 5-ում: Հավելված 4-ի ժամանակացույցում նշված է, որ այդ արդյունքները ցանկալի է ունենալ մինչև սույն թվականի Օգոստոսի 31-ը:

2.2.4 Սեմինար տարածքային գործակալությունների աշխատակիցների համար

Հունիսի 27-ին կազմակերպվել էր սեմինար մարզերի ներկայացուցիչների մասնակցությամբ, որի թեման վերաբերվում էր ԳՀՀ-ի <<Տվյալների որակի հարցերին>>: Սկզբում ներկայացվեց ԳՀՀ-ի պլանավորման ներկայիս կարգավիճակը, այնուհետև նշվեց ԳՀՀ-ի կարևոր դերը և վերջինիս վերաբերյալ տեղեկատվական արշավի անհրաժեշտությունը: Այնուհետև նշվեցին, բարձր որակի տվյալներ ունենալու պահանջները՝ հարցաթերթիկի, հրահանգների, հարցազրույցների կազմակերպման և տվյալների հնարավոր ստուգման մեթոդների վերաբերյալ: Տես հավելված Դ4.9:

Մասնակիցները հրավիրված էին ներկայացնելու ընդհանուր մեկնաբանություններ Մարդահամարի փորձի առնչությամբ, որը նաև կարող է համապատասխան լինեն ԳՀՀ-ի համար:

Մասնակիցները նշեցին աշխատակիցներին տարանջատելու անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով տարբեր մարզերում տարբեր պայմանները, ինչպես նաև ֆինանսավորման ապահովումը ժամանակին տրամադրելու անհրաժեշտությունը՝ նախքան գործնական պլանավորման իրականացումը: Այս ժամանակահատվածը Մարդահամարի ժամանակ չափազանց կարճ է եղել:

Նաև կարծիքներ հայտնվեցին, թե որը կլինի տարվա լավագույն ժամանակահատվածը ԳՀՀ-ն իրականացնելու համար: Որևէ ընդհանուր եզրակացություն ձեռք չի բերվել, սակայն տպավորությունն այնպիսինն է, որ մասնակիցների մեծամասնությունը նախապատվությունը տալիս է հոկտեմբեր ամսին:

ՇԵ բաղադրիչի ղեկավարը խոստացավ, որ ՀՀ ԱՎԾ-ն երկկողմանի կանդրադառնա այս հարցին տարածքային գործակալությունների հետ՝ ուսումնասիրելու իրենց ռեսուրսները և ԳՀՀ-ի իրականացման համար նախընտրելի ժամանակահատվածը (ամիսը) որոշելու համար: Տարածքային գործակալություններին առաջարկվեց ՀՀ ԱՎԾ կենտրոնական գրասենյակ ուղարկել իրենց կարծիքները մինչև 2012 թվականի սեպտեմբեր ամիսը: ԱՊ փորձագետները առաջարկում են, որ կենտրոնական գրասենյակը մշակի պատասխանների ստանդարտ ձևաչափ տարածքային գործակալությունների համար՝ համակարգված ձևով վերջիններիս տեսակետները ստանալու համար:

Հարցաթերթիկի ներկայիս նախագծի տարբերակը բաժանվեց մասնակիցներին: Միայն մի քանի մեկնաբանություններ արվեցին սեմինարի ընթացքում: Դրանցից մեկն այն էր, որ փոքր միավորների համար ճիշտ չէ հարցը ձևակերպել հեկտարներով:

Մասնակիցները նաև իրենց հետաքրքրությունը ցուցաբերեցին հետագա նմանատիպ սեմինարների կազմակերպման համար՝ առավել լավ տեղեկացված լինելու և պլանավորման աշխատանքներում հնարավոր ներգործություն ունենալու համար:

2.2.5 Հանդիպում ՀՀ ԳՆ/ՀՀ ԱՎԾ համատեղ աշխատանքային խմբում ԳՀՀ-ի վերաբերյալ

Հունիսի 29-ին տեղի ունեցավ ՀՀ ԳՆ/ՀՀ ԱՎԾ համատեղ աշխատանքային խմբի չորրորդ հանդիպումը ԳՀՀ-ի վերաբերյալ: Թեման վերաբերվում էր ԳՀՀ-ի ռազմավարական փաստաթղթին և ԳՀՀ տվյալներին/հարցաթերթիկին:

Ռազմավարական փաստաթղթի համար, որը մշակվել էր ՀՀ ԱՎԾ-ի կողմից որոշվեց, որ այն պետք է համալրվի բյուջեյի այլընտրանքներով: ՀՀ ԱՎԾ և ԳՆ համակարծիք են, որ ԳՀՀ-ն չի կարող իրականացվել 2014 թվականից ավելի շուտ, ինչպես քաղաքական (2013 թվականի հունվարին նախագահական ընտրություններն են), այնպես էլ գործնական պատճառներից ելնելով: 400 000 ԱՄՆ դոլլարի օժանդակությունը Համաշխարհային Բանկի կողմից, որն ուղղված է լինելու փորձնական ԳՀՀ-ի համար, ամենայն հավանականությամբ կհաստատվի 2012 թվականի օգոստոսին և այնուհետև գումարը հասանելի կլինի 2013 թվականի հունիս/հուլիս ամիսներին:

ՀՀ ԱՎԾ-ի կողմից նշվեց, որ նախատեսվում են իրականացնել ևս մի քանի դաշտային փորձարկումներ՝ հարցաթերթիկի և հրահանգների հետագա բարելավման համար: ՀՀ ԳՆ նշեց, որ մանրամասն տեղեկատվությունը չօգտագործված հողատարածքների վերաբերյալ խիստ կարևոր է:

2.2.6 Փորձնական ԳՀՀ

Ինչպես արդեն նշվել է նախորդ բաժնում, փորձնական ԳՀՀ- ն հնարավոր է ֆինանսավորվի Համաշխարհային բանկի կողմից: Այս փորձնական հետազոտության գաղափարն այն է, որ փորձարկվեն ԳՀՀ-ի բոլոր քայլերը: Պլանավորումը և բյուջեյի հատկացումը արդեն կսկսվի 2012 թվականի աշնանից և Թվինինգ ծրագրի կողմից ցանկացած հնարավոր աջակցություն ցանկալի կլինի ՀՀ ԱՎԾ-ի համար: Այս փորձնական պլանավորման որակը զգալիորեն կբարելավվի եթե հնարավոր լինի իրականացնել լրացուցիչ առաքելություն Թվինինգ ծրագրի շրջանակներում, օրինակ հոկտեմբերի 19-25, ինչպես կարելի է ենթադրել՝ ելնելով Հավելված 4-ում նշված ժամանակացույցից և աշխատանքային ծրագրից:

3. Առաջարկություններ

Տրվել են մի քանի առաջարկություններ հարցաթերթիկի նախագծման և հարցազրուցավարների հրահանգների վերաբերյալ, որոնք ներկայացված են 2-րդ գլխի 6-րդ հավելվածում: Սրանք պետք է հաշվի առնել հետագա դաշտային փորձարկումների պլանավորման ժամանակ: Ստորև ամփոփված են որոշ շատ կարևոր առաջարկություններ:

- ԱՊ փորձագետները առաջարկում են, որ առաջիկա դաշտային փորձարկումները ներառեն չօգտագործված հողերի, տնամերձ հողերի, երկրորդական մշակաբույսերի և տնտեսության հողատարածքների գտնվելու վայրի վերաբերյալ տեղեկատվություն: Ինչպես նաև որոշ բաժիններ պետք է բարելավվեն համաձայն Հավելված 6-ում նշված առաջարկությունների:
- Հարցազրուցավարների հրահանգները պետք է հնարավորինս մշակվեն հարցաթերթիկի հետ միասին և ներառեն օրինակներ հնարավոր խնդիրների ինչպես նաև լուծումների վերաբերյալ: Նման օրինակների կազմումը պետք է սկսվի հնարավորինս շուտ՝ հրահանգներում օգտագործելու համար, ինչպես նաև հարցազրուցավարներին վերապատրաստելու համար:
- ՇԵ փորձագետները պետք է ուսումնասիրեն այլ երկրների ձեռնարկները/հրահանգները ԳՀՀ-ի ոգեշնչման համար: Համապատասխան օրինակ կարող են հանդիսանալ Մոլդովայի, Սերբիայի և Ալբանիայի ձեռնարկները: Հաշվի առնելով ծրագրի ավարտին մնացած ժամանակահատվածը, նախընտրելի է օգտագործել Մոլդովայի օրինակը:
- Կողմնակի աղյուսակների կիրառումը (կամ աղյուսակներ) կարող է որոշ դեպքերում բարելավել կամ պարզեցնել տվյալների հավաքագրումը: Օրինակ կարող է հանդիսանալ աշխատաժամանակի ժամերի բաշխումը ամբողջ տարվա կտրվածքով:
- Սերտ համագործակցություն է անհրաժեշտ ՀՀ ԱՎԾ Մարդահամարի բաժնի հետ, որպեսզի պարզ լինի, թե ինչպիսի փորձ կարելի է օգտագործել ԳՀՀ-ի համար՝ տվյալների հավաքագրման կազմակերպման, տվյալների մուտքագրման համար և այլն, և թե որ վիճակագրական արդյունքները բյուջեյի, ընտրանքի և այլնի վերաբերյալ կարող են օգտակար լինել ԳՀՀ-ի պլանավորման համար:
- Խորհուրդ է տրվում կազմակերպել ևս մեկ լրացուցիչ առաքելություն հոկտեմբեր ամսին՝ հետագա դաշտային փորձարկումների համար, ինչպես նաև հարցաթերթիկի/հրահանգների բարելավման համար:

4. Գործողությունների իրականացում նախքան հաջորդ առաքելությունը

Ծրագրի հետագա ժամանակահատվածի ժամանակացույցը և աշխատանքային ծրագիրը ներկայացված է Հավելված 4-ում: Առաջիկա դաշտային փորձարկումը նախատեսված է օգոստոսի վերջին/սեպտեմբերի սկզբին և ԱՊ փորձագետները պատրաստ են ներկայացնելու իրենց առաջարկությունները այդ արդյունքների վերաբերյալ անմիջապես արդյունքերը ստանալուց հետո: Եթե իրականացվի ԱՊ փորձագետների լրացուցիչ առաքելություն 2012 թվականի հոկտեմբեր ամսին այն կներառի ևս մեկ դաշտային փորձարկում հոկտեմբերի երկրորդ կեսին: Փորձարկումը պետք է նախապես պլանավորվի ՀՀ ԱՎԾ-ի կողմից:

ՀՀ ԱՎԾ-ի կողմից պետք է գործադրվեն բոլոր հնարավոր ջանքերը Թվինինգ ծրագրի ընթացքում Մարդահամարի արդյունքները հասանելի դարձնելու համար՝ նախքան օգոստոսի վերջ/սեպտեմբերի սկիզբ:

Հավելված 1. Տեխնիկական առաջադրանք

Գործունեություն Դ 4 Տարածքային տեսակենտները և սխալների ուղղումը

Բաղադրիչի պարտադիր արդյունքները

Գյուղատնտեսության համատարած հաշվառման ներկայացում, այն է՝ գյուղատնտեսության համատարած հաշվառումը դաշտ կբերվի ինչպես և պլանավորվարված է և կմեկնարկի: Սա նշանակում է, որ բոլոր համապատասխան որոշումները կապված ընտրանքի շրջանակի հետ պետք է իրականացվեն և հարցաթերթիկը պետք է վերջնական տեսքի բերվի, ներառյալ հետազոտության աշխատակազմին առնչվող հրահանգների նյութերի պատրաստումը:

1. Գործունեության նպատակը

Գործունեության նպատակն է սկսել բաղադրիչի աշխատանքների ամփոփման գործընթացը՝ հստակ հղում անելով բաղադրիչի պարտադիր արդյունքներին:

2. Գործունեության ակնկալվող արդյունքները

Գործունեության ալկնկալվող արդյունքներն են՝

- Հանդիպում Գյուղատնտեսության համատարած հաշվառման համատեղ աշխատանքային խմբի շրջանակում (ՀՀ ԱՎԾ և ԳՆ);
- Գյուղատնտեսության համատարած հաշվառման հարցաթերթիկի գնահատում՝ հաշվի առնելով դաշտային փորձարկման արդյունքները;
- Համաձայնություն առաջիկա քայլերի շուրջ, որոնք վերաբերվում են Գյուղատնտեսության համատարած հաշվառման ռազմավարական փաստաթղթին, որը պետք է ներկայացվի ՀՀ Կառավարությանը օգոստոս ամսվա վերջին;
- Սեմինար տվյալների հավաքագրման և տվյալների որակի վերահսկման վերաբերյալ՝ վիճակագրության տարածքային գրասենյակների մասնակցությամբ;
- Մանրակրկիտ և կառուցվածքային ծրագիր առաջին (փոքր) փորձնական և երկրորդ (մեծ) փորձնական ԳՀՀ-ի համար;
- Համագործակցությունը ԱՄՆ Գյուղդեպարտամենտի հետ կապված փորձնական ԳՀՀ-ի և բուն ԳՀՀ- պլանավորման հետ;
- Դաշտային փորձարկումների նախապատրաստում – հարցաթերթիկի և հարցազրուցավարների հրահանգներ
- Տեխնիկական առաջադրանքի նկարագիր և որոշում կապված Դ.6 վերջին գործունեության ժամանակահատվածի հետ

3. Ծրագրի մասնակիցները

Պրն. Գագիկ Անանյան, Վիճակագրության պետական խորհուրդ (*ՇԵ բաղադրիչի ղեկավար*)
Պրն. Արսեն Ավագյան, Գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ

Ռուզաննա Վարդանյան, Գյուղատնտեսության վիճակագրության բաժին, առաջատար մասնագետ
Ռոլֆ Սելանդեր, Գյուղատնտեսության Վիճակագրություն, Շվեդիայի Վիճակագրություն, ավագ փորձագետ
Մոնա Լարսեն, Գյուղատնտեսության Վիճակագրության բաժին, ենթաբաժնի պետ, Դանիայի Վիճակագրություն

Արտաքին շահառուներ, որոնք մասնակցում են գործունեությանը
ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն
ԱՄՆ Գյուղդեպարտամենտ

Հավելված 2. Առաքելության ծրագիրը

ԱՊ փորձագետների հանդիպման ծրագիրը

Ժամը	Վայրը	Միջոցառումը	Նպատակը/մանրամասները
	Կոնգրես հյուրանոց	Հանդիպում ԹՄԽ-ի հետ	Շաբաթվա ծրագրի քննարկում
Երկուշաբթի, 25 Հունիսի առավոտյան	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի հետ	Ընթացիկ կարգավիճակը: ՇԵ բաղադրիչի ղեկավարը կներկայացնի Գյուղատնտեսության համատարած հաշվառման (ԳՀՀ)նախապատրաստման վերջին զարգացումները
կեսօրին	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ԱՄՆ Գյուղդեպարտամենտի հետ	ԳՀՀ-ին ցուցաբերված փորձագիտական աջակցության համակարգումը
Երեքշաբթի, 26 Հունիսի առավոտյան	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում Գյուղատնտեսության Վիճակագրության բաժնում	Հարցաթերթիկի քննարկումը վերջին փորձարկումներից հետո: Հետագա քայլերը- ինչ պետք է մշակվի առաջիկայում, իսկ ինչ կարելի է ասել հարցազրուցավարների հրահանգների վերաբերյալ:
Չորեքշաբթի, 27 Հունիսի, առավոտյան	ՀՀ ԱՎԾ (դահլիճ)	Սեմինար ՀՀ ԱՎԾ տարածքային գործակալությունների հետ	Տեղեկացնել ընթացիկ ծրագրերի վերաբերյալ՝ ուշադրություն դարձնելով տարածքային գրասենյակների դերին և ստանալ նրանց տեսակետները կազմակերպչական հարցերի վերաբերյալ, որոնք առնչվում են տվյալների հավաքագրմանը և տվյալների որակի վերահսկմանը
կեսօրին	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի հետ	ԳՀՀ-ի բյուջեն – մշակել ծրագիր, թե ինչպես պետք է ապահովել ամենա-արդյունավետ տարբերակը ԳՀՀ-ի ֆինանսավորման համար՝ ելնելով կառավարության հեռանկարներից
Հինգշաբթի, 28 Հունիսի առավոտյան	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում Մարդահամարի վարչության հետ	Ստանալ մարդահամարի արդյունքների փաստացի կարգավիճակը և քննարկել ժամանակացույցը և հեռանկարները մարդահամարի տվյալների և ենթակառուցվածքների օգտագործման համար
կեսօրին	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի	Մշակել պլան Թվինինգ ծրագրի մնացած ժամանակահատվածի համար:

		ղեկավարի հետ	Փորձնական ԳՀՀ-ի և ԳՀՀ-ի ժամանակացույցը
Ուրբաթ, 29 Հունիսի առավոտյան	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ԳՀՀ-ի համատեղ աշխատանքային խմբի հետ	Շարունակել ԳՀՀ-ի պլանավորումը՝ հատուկ ուշադրություն դարձնելով համատեղ ռազմավարական փաստաթղթի վրա
կեսօրին	ՀՀ ԱՎԾ	Հատուկ հանդիպումներ	Առաքելության զեկույցի հետագա աշխատանքերը և բրիֆինգի նախապատրաստում
	ՀՀ ԱՎԾ	Բրիֆինգ ՇԵ բաղադրիչի ղեկավարի հետ	Եզրակացություններ և առաջարկություններ: Հետևանքները հաջորդ առաքելության համար և ՇԵ փորձագետների համար կիրառելի աշխատանքային ծրագիրը:

Հավելված 3. Անձինք, որոնց հետ հանդիպումներ են տեղի ունեցել

Ստեփան Մնացականյան, ՀՀ ԱՎԾ նախագահ (*ՇԵ ծրագրի ղեկավար*)
Գագիկ Անանյան, ՀՀ ԱՎԾ Վիճակագրության Պետական Խորհրդի անդամ (*ՇԵ բաղադրիչի ղեկավար*)
Անահիտ Սաֆյան, Միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ
Արսեն Ավագյան, Գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ
Ռուզաննա Վարդանյան, Գյուղատնտեսության վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ
Լաուրա Գրիգորյան, Գյուղատնտեսության վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ
Վարդան Արևշատյան, Գյուղատնտեսության վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ
Վահե Ճաղարյան, Գյուղատնտեսության վիճակագրության բաժնի առաջին կարգի մասնագետ

Հակոբ Բաղալյան, Գեղարքունիքի մարզային գործակալության ղեկավար
Կարապետ Դեղոյան, Գեղարքունի վիճ. տարածքային գործակալության պետ
Վրեժ Ավետիսյան, Երևան քաղաքի գործակալության ղեկավար
Լեվիկ Մովսիսյան, Արագածոտնի մարզային գործակալության ղեկավար
Իշխան Սարգսյան, Արմավիրի մարզային գործակալության ղեկավար
Լևոն Դավթյան, Արարատի մարզային գործակալության ղեկավար
Վահագն Դավթյան, Կոտայքի մարզային գործակալության ղեկավար
Վրեժ Մանուկյան, Լոռու մարզային գործակալության ղեկավար
Առուշան Ղազարյան, Վայոց Ձորի մարզային գործակալության ղեկավար
Աիդա Աչինյան, Տավուշի մարզային գործակալության ղեկավար

Հավելված 4. Ծրագրի հետագա ժամանակահատվածի ժամանակացույցը և աշխատանքային ծրագիրը

20-24 Օգոստոսի 2012	Ուսուցողական այցելություն Դանիայի Վիճակագրություն
1 Սեպտեմբերի 2012	Ա) Հարցաթերթիկի հաջորդ տարբերակը (<<Հարցաթերթ_2012 Սեպ.>>) պետք է պատրաստ լինի փորձարկման համար և ԱՊ փորձագետների առաջարկությունների համար Բ) Հարցազրուցավարների հրահանգների առաջին նախագիծը (<<Հրահանգ_2012 Սեպ.>>) պետք է պատրաստ լինի փորձարկման և թարգմանության համար Գ) Նկարագիր աղյուսակները պետք է լրացված և պատրաստ լինեն ԱՊ փորձագետների մեկնաբանությունների և պլանավորման համար, տես. Մարդահամարի առաջարկվող ձևանմուշը Հավելված 5-ում,
11-12 Սեպտեմբերի 2012	Դաշտային փորձարկումները պետք է իրականացված լինեն հարթավայրային գոտում և փաստաթղթավորվեն համառոտ զեկույցով
24 Սեպտեմբեր 2012	Գրավոր կարծիքներ ԱՊ փորձագետների կողմից դաշտային փորձարկումների արդյունքների վերաբերյալ և մարդահամարի լրացված նկարագիր աղյուսակի վերաբերյալ, տես Հավելված 5
28 Սեպտեմբեր 2012	Հարցազրուցավարների հրահանգների առաջին տարբերակի (<<Հրահանգ_2012 Սեպ.>>) հիմնական մասերը պետք է թարգմանված լինեն ԱՊ փորձագետների գրավոր առաջարկությունների համար
8 Հոկտեմբեր 2012	Գրավոր կարծիքներ ԱՊ փորձագետների կողմից հարցազրուցավարների հրահանգների վերաբերյալ (<<Հրահանգ_2012 Սեպ.>>) և հարցաթերթիկի վերաբերյալ (<<Հարցաթերթ_2012 Սեպ.>>)
15 Հոկտեմբեր 2012	Ա) Հարցաթերթիկի հաջորդ տարբերակը (<<Հարցաթերթ_2012 Հոկտ.>>) պետք է պատրաստ լինի փորձարկման համար Բ) Հարցազրուցավարների հրահանգների հաջորդ տարբերակը (<<Հրահանգ_2012 Հոկտ.>>) պետք է պատրաստ լինի փորձարկման և թարգմանության համար
19-25 Հոկտեմբեր 2012	Թվինինգի լրացուցիչ առաքելություն Դ 3.2 Իրականացման աջակցություն II (հաստատված չէ)

	Ա) Դաշտային փորձարկումներ երկու մարզերում Բ) Հետագա առաջարկություններ հարցաթերթիկի և հրահանգների վերաբերյալ Գ) Փորձնական գյուղատնտեսության համատարած հաշվառման ծրագրի մշակում
9 Նոյեմբերի 2012	
	Ա) Հարցազրուցավարների հրահանգների հաջորդ տարբերակը (<<Հրահանգ_2012 Նոյեմ.>>) Բ) Հարցաթերթիկի հաջորդ տարբերակը (<<Հարցաթերթ_2012 Նոյեմ.>>)
26-30 Նոյեմբեր 2012	Ամփոփման առաքելություն Ա) Վերջնական առաջարկություններ Բ) Վերջնական զեկույց
Դեկտեմբեր	Հնարավոր հետևողական գործողություններ վերջնական զեկույցի համաձայն

Հավելված 5. Մարդահամարի նկարագիր աղյուսակներ (ձևանմուշ)

Հետևյալ երեք նկարագիր աղյուսակները կնպաստեն Գյուղատնտեսության համատարած հաշվառման հետագա պլանավորմանը և բյուջետային հարցերին:

Նշում. Աղյուղակներից յուրաքանչյուրը պետք է պատրաստվի երկու տարբերակով՝ մեկը գյուղական շրջանների համար, մյուսը՝ քաղաքային: Այսինքն Հայաստանի ընդհանուր համակցությունը պետք է բաժանվի երկու մասի՝ գյուղական շրջաններ և քաղաքային շրջաններ: Համակցության այս երկու մասերից յուրաքանչյուրի համար պետք է լրացվեն հետևյալ երեք աղյուսակները:

Աղյուսակ 1 Գյուղատնտեսական գործունեություն

	Տնտեսությունների ընդհանուր քանակը Մարդահամարում	Ակտիվ են գյուղատնտեսության մեջ	Ակտիվ չեն գյուղատնտեսության մեջ	Ակտիվ են ակվակուլտուրա ներում
	A (=B+C)	B	C	D
Մարզ 1				
Մարզ 2				
...				
...				
...				
Մարզ 10				
Երևան				

Աղյուսակ 2 Անասնագլխաքանակ

	Տնտեսությունների ընդհանուր քանակը Մարդահամարում	ՈՐՊԵՍ տնտեսությունների քանակը, որոնք ունեն անասուններ	ՈՐՊԵՍ անասունների քանակը <= 5 (այսինքն B-ից)	ՈՐՊԵՍ անասունների քանակը > 5 (այսինքն B-ից)	Անասնագլխաքանակի ընդհանուր թիվը	Խոզերի ընդհանուր թիվը	Այծերի ընդհանուր թիվը	Ընտանի թռչունների ընդհանուր թիվը
	A	B (=C+D)	C	D	E	F	H	G
Մարզ 1								
Մարզ 2								
...								
...								
...								
Մարզ 10								
Երևան								

Աղյուսակ 3 Հողի օգտագործումը

	Տնտեսությունների ընդհանուր քանակը Մարդահամարում	ՈՐՊԵՍ: Գյուղատնտեսական հողատարածքներ ունեցողների քանակը (նշված չէ)	ՈՐՊԵՍ: Տնտեսությունների քանակը, որոնց հողատարածքը <= 0.5 հա	ՈՐՊԵՍ : Տնտեսությունների քանակը, որոնց տարածքը 0.5 և 1.0 հա է	ՈՐՊԵՍ Տնտեսությունների քանակը, որոնց հողատարածքը >=1.0 հա է	Տնտեսությունների ընդհանուր հողատարածքը <= 0.5 հա է (այսինքն C-ից)	Ընդհանուր հողատարածքը 0.5 և 1.0 հա է (այսինքն D-ից)	Տնտեսությունների ընդհանուր հողատարածքը > 1.0 հա (այսինքն E-ից)	Ընդհանուր վարելահողերը (հա)	Բազմամյա տնկարկներ (հա)
	A	B (=C+D+E)	C	D	E	F	G	H	I	J
Մարզ 1										
Մարզ 2										
...										
...										
...										
Մարզ 10										
Երևան										

Հավելված 6. Առաջարկություններ հարցաթերթիկի վերաբերյալ

(Հղումը կատարված է 2012 թվականի հունիսի 25-ի հարցաթերթիկին, Հավելված 7)

Հարցաթերթիկում յուրաքանչյուր բաժնից առաջ ԱՊ փորձագետները ավելացրել են հաշվետու ժամանակաշրջանը (կամ ժամանակահատվածը) և կարևոր է, որ հարցազրուցավարները հասկանան դա, այսինքն մշակաբույսերի հաշվետու ժամանակաշրջանը դա մշակաբույսերի տարին է, և անասնագլխաքանակի համար դա կոնկրետ ամսաթիվ է: Հաշվետու ժամանակաշրջանի ընտրությունը (կամ ժամանակահատվածի) պետք է դիտարկվի մանրամասն ՇԵ փորձագետների կողմից:

Հարցաթերթիկի առաջին բաժնի վերաբերյալ

Առաջարկություն. 5.1, 5.2 և 5.3 հարցերը հանել այս բաժնից, քանի որ դրանք անտրամաբանական են թվում այստեղ: Դրա փոխարեն հարցրեք XII բաժնում <<>Աշխատուժի վերաբերյալ>>: Տեղեկատվությունը հեռախոսահամարի վերաբերյալ բացակայում է նոր հարցաթերթիկում: Դա կամ կարելի է հարցնել 4-րդ հարցի հետ (հասցեի վերաբերյալ տեղեկատվություն) կամ տնտեսության ղեկավարի ստորագրության հետ միասին:

II-ից V-րդ բաժինների վերաբերյալ՝ գյուղատնտեսական հողատարածքներ

ԱՊ փորձագետները առաջարկում են, որ բոլոր հարցերը հողերի/հողատարածքների վերաբերյալ պետք է պատասխանվեն կամ հեկտարներով երկու տասնորդականներով կամ քառակուսի մետրերով: Հարցաթերթիկը կարող է նախագծված լինեն կամ պատասխանի երկու սյունակներով հողատարածքների և մշակաբույսերի համար, մեկը հեկտարներով, մյուսը քառակուսի մետրերով, կամ էլ նախնական հարցով միավորի ընտրությամբ:

ԱՊ փորձագետները շեշտում են, որ շատ կարևոր է լավ հրահանգների միջոցով ներկայացնել հարցաթերթիկի այս հատվածը: Հարցաթերթիկի փորձարկումը ցույց տվեց, որ խնդիրներ կան ստույգ տեղեկատվություն հավաքագրելու առումով, քանի որ ինչպես հարցազրուցավարները, այնպես էլ ֆերմերները դժվարանում են հասկանալ, թե ինչ է իրականում պահանջվում:

Բացի այդ, գոյություն ունի <u>ազգային պահանջ՝ ունենալ տեղեկատվություն չօգտագործված հողերի վերաբերյալ</u>: Այդ իսկ պատճառով առաջարկվում է հարցաթերթիկի այս մասում ունենալ որոշակի փոփոխություններ, որպեսզի այն համապատասխանի այդ պահանջներին և նաև հարցազրուցավարների համար ավելի պարզ դարձնել այս հարցը՝ ճշգրիտ տեղեկատվություն ստանալու համար:

Տարբերակներից մեկը կարող է լինել այն, որ ՇԵ փորձագետները հարցազրուցավարների համար մշակեն որոշակի <<օգնության աղյուսակներ/օգնության հարցաշարեր>> հողերի վերաբերյալ: Դա կարող է լինել յուրաքանչյուր հողատարածքի համար մեկական <<օգնության աղյուսակ/օգնության հարցաշար>> և գծագիր տարբեր հողատարածքների գտնվելու վայրի վերաբերյալ:

Հատկապես գյուղատնտեսական նշանակության հողատարածքների վերաբերյալ շատ կարևոր է ունենալ հստակ սահմանում:

Պետք է նաև լինի որոշում գյուղատնտեսական նպատակներով օգտագործվող հողատարածքների վերաբերյալ, որոնք կամ չեն հանդիսանում որևէ մեկի սեփականությունը, կամ էլ հայտնի չէ, թե ովքեր են հանդիսանում դրանց սեփականատերերը: ԱՊ փորձագետներն առաջարկում են, որ այն ֆերմերը, ով օգտագործում է տվյալ հողատարածքը նա էլ պետք է հաշվետու լինի դրա համար, նույնիսկ եթե դրա իրական սեփականատերը հայտնի չէ: Սա համապատասխանում է տնտեսության ընդհանուր սահմանմանը – բոլոր հողատարածքները, որոնք օգտագործվում են ֆերմերի/տնտեսության կողմից պետք է ներառված լինեն:

II բաժնի վերաբերյալ, Գյուղատնտեսական հողատարածքներ

ԱՊ փորձագետները առաջարկում են այս բաժնում ավելացնել նոր փոփոխական <<Չօգտագործված հողատարածքներ>>: Պետք է լինի հստակ սահմանում << Չօգտագործված հողատարածքների>> վերաբերյալ, որպեսզի հարցազրուցավարը տեղյակ լինի թե ինչ է դա և կարողանա բացատրել ֆերմերին:

Անհրաժեշտ է ունենալ հստակ սահմանում վարձակալված հողերի վերաբերյալ: 2012 թվականի մարտ ամսի դաշտային փորձարկումները ցույց են տվել, որ հողերը կարող են վարձակալված լինել կամ փոխառությամբ վերցված լինել և դա կարող է լինել ինչպես վճարման դիմաց, այնպես էլ առանց վճարի, կամ պայմանագրային հիմունքներով: Որպես օգնություն ֆերմերների և հարցազրուցավարների համար, կարելի է վերջում ավելացնել լրացուցիչ սյունակ <<Ընդհանուր հողատարածք>>:

Աղյուսակ II –ը ներառում է տնտեսության հողատարածքները, եթե հետևելու լինենք ԵՄ ՏԿՀ-ն օրենսդրությանը (Գյուղատնտեսության համատարած հաշվառման վերաբերյալ): Սա նշանակում է, որ եթե վարելահողի միևնույն հողատարածքը օգտագործվի հաշվետու ժամանակաշրջանում տարբեր մշակաբույսերի համար (միաժամանակ կամ հաջորդաբար), ապա հողատարածքը պետք է նշվի միայն մեկ անգամ, հիմնական մշակաբույսերի վերաբերյալ (մշակաբույսերը, որոնք ունեն արտադրության ամենամեծ արժեքը): Եթե արտադրության արժեքը չի որոշվում հիմնական մշակաբույսերով, ապա հիմնական մշակաբույսը համարվում է այն, որը զբաղեցնում է հողը ամենաերկար ժամանակահատվածով հաշվետու ժամանակաշրջանում: Միջշարքային, համակցված և հաջորդական մշակաբույսերի հողատարածքը արդեն ներառված են հիմնական մշակաբուսերի մեջ կամ վարելահողերի օգտագործված հողատարածքներում:

Միջշարքային մշակաբոյսերը այն մշակաբույսերն են, որոնք տնկված են հիմնական մշակաբույսերի շարքերի միջև: Դա կարող է լինել օրինակ, դաշտային լոբին, դդումը, կերային եգիպտացորենը և այլն: Համակցված մշակաբույսերը (երեքնուկ, առվույտ, խառը խոտ և այլն) տնկվում են հիմնական մշակաբույսերի միջև և հանդիսանում են որպես դրանց պաշտպանիչներ: Նման մշակաբույսերի տնկումը և բերքահավաքը իրականացվում է առանձին:

Հաջորդական մշակաբույսերը (երկրորդական մշակաբույսեր) դրանք այն մշակաբույսերն են, որոնք տնկվում են հնձած հացահատիկների բերքահավաքից հետո և աշնան բերքի հասունացումից հետո: Դրանք են կաղամբը, մանր վարունգը, սպանախը և այլն:

Ցանկալի է ավելացնել նոր լրացուցիչ հարց ընդհանուր հողատարածքների վերաբերյալ (որն օգտագործվում է որպես արոտավայր): Կարելի է նաև դիտարկել, թե անհրաժեշտ է արդյոք ունենալ տեղեկատվություն, թե որքան թվով անասուններ և տարվա ընթացքում քանի օր են դրանք բացակայում տնտեսությունից (գտնվում են սարերում):

Հնարավոր է ունենալ <<օգնության աղյուսակներ/հարցաթերթիկներ>>, որոնք կարող են օգտագործվել յուրաքանչյուր առանձին հողատարածքի համար: Այնուհետև հարցազրուցավարները և ֆերմերները կարող են դիտարկել ըստ առանձին դաշտերի և պարզել, թե որքան է այդ դաշտը, ինչպիսի մշակաբույսեր և բազմամյա տնկարկներ են աճում այդ դաշտերում և յուրաքանչյուր մշակաբույսի համար օգտագործվող հողատարածքը: Երբ ուսումնասիրվեն բոլոր դաշտերը կկազմվի պլան այդ տնտեսության բոլոր հողատարածքների վերաբերյալ: Դրանից հետո հարցազրուցավարը կարող է ֆերմերի հետ միասին լրացնել II-ից V –րդ աղյուսակների ընդհանուր թիվը:

Ինչ վերաբերվում է <<օգնության աղյուսակներին/հարցաթերթիկներին>> առաջարկվում է հարցաթերթիկուում տեղադրել գծագիր տարբեր հողատարածքների գտնվելու վայրերի վերաբերյալ:

.



Դատարկ քառակուսի, որի կենտրոնում տեղակայված լինի տնտեսությունը կարողանա նշել իր հողատարածքները և հետևաբար մտապահի տնտեսությանը պատկանող բոլոր տարբեր հողատարածքները:

IV և V բաժինների վերաբերյալ

IV և V բաժինները ներկայացնում են տարվա ընթացքում աճեցված մշակաբույսերի և բազմամյա տնկարկների ցանկը, որոնք աճեցվել են մշակվող հողատարածքներում: ԵՄ ՏԿՀ կանոնակարգի պահանջներում մշակված հողատարածքները պետք է հավասար լինեն IV և V բաժինների ամբողջ հանրագումարին, նույնիսկ եթե կան որոշ դաշտեր, որոնք տարվա ընթացքում օգտագործվում են երկու անգամ կամ դրանից ավելին:

Ուստի եթե Հայաստանին անհրաժեշտ է մշակաբույսերի և բազմամյա տնկարկների արտադրության վերաբերյալ մանրամասն բնութագիր ունենալ, այդ տարածքը ոչ բոլոր դեպքերում է հավասար լինելու ընդհանուր հողատարածքին, քանի որ մեկ տարվա ընթացքում դաշտերում կարող են մշակվել մեկից ավելի մշակաբույսեր:

Հետևաբար, քանի որ եթե <u>Հայաստանն ունի ազգային անհրաժեշտություն</u> ունենալ տեղեկատվություն բոլոր մշակաբույսերի և բազմամյա տնկարկների վերաբերյալ և դրանց արտադրության համար օգտագործվող հողատարածքների վերաբերյալ, ապա ԱՊ փորձագետները առաջարկում են վերաձևափոխել IV և V բաժինները: Լուծումներից մեկը կարող է լինել այն, որ թողնել այնպես, որ IV բաժինը պարունակի տեղեկատվություն առաջնային մշակաբույսերի վերաբերյալ: Իսկ այն հողատարածքները, որոնք օգտագործվում են

հաջորդական (երկրորդական) մշակաբույսերի վերաբերյալ կարող է հավաքագրվել նոր առանձին աղյուսակով <<**Հաջորդական գյուղատնտեսական մշակաբույսեր**>>:

Հիշեք, որ IV և V բաժինները վերաբերվում են տնտեսության ենթակայության տակ գտնվող բոլոր հողատարածքներին, ինչպես նաև հողատարածքներ, որոնք գտնվում են այլ շրջաններում (մարզերում):

VI բաժին, պարարտանյութերի և թունաքիմիկատների օգտագործման վերաբերյալ

Պարարտանյութերի և թունաքիմիկատների հարցերը կարող են բարդ լինել: Այդ իսկ պատճառով ԱՊ փորձագետները առաջարկում են ունենալ այո/ոչ հարցեր, օրինակ՝

Օգտագործվել են արդյոք քիմիական/հանքային պարարտանյութեր անցյալ տարվա ընթացքում կամ
Օգտագործվել են արդյոք քիմիական/հանքային պարարտանյութեր վերջին երկու տարվա մեջ ?
Արդյոք օգտագործվել են օրգանական պարարտանյութեր (գոմաղբ, մեզ, հեղուկ կավ) վերջին տարվա ընթացքում?
Օգտագործվել են արդյոք թունաքիմիկատներ վերջին տարվա ընթացքում ? կամ վերջին 2 տարվա ընթացքում?

Եթե անհրաժեշտ է ունենալ ավելի մանրամասն տեղեկատվություն քիմիական պարարտանյութերի վերաբերյալ կարելի է ԳՀՀ-ից հետո իրականացնել ընտրանքային հետազոտություն այն միավորների շրջանում, որոնք ԱՅՈ պատասխան են տվել այդ հարցերին:

VIII Բաժին, Գյուղատնտեսական կենդանիների և թռչունների առկա գլխաքանակը

Պետք է նշվի, որ անասնագլխաքանակը պետք է ուսումնասիրվի կոնկրետ օրվա դրությամբ: ԱՊ փորձագետները առաջարկում են, որ հաշվետու ժամանակաշրջանը հնարավորինս մոտ լինի հարցման ժամանակահատվածին: Եթե ոչ, ապա ֆերմերը կարող է դժվարություն ունենալ անասնագլխաքանակի վերաբերյալ ստույգ տեղեկատվություն տրամադրելու հարցում:

Հարցաթերթիկի դաշտային փորձարկումները ցույց են տալիս, որ հարցազրուցավարները դժվարանում են, երբ սկսում են հարցնել ընդհանուր թվից, այդ իսկ պատճառով առաջարկվում է փոփոխել այդ հատվածի կառուցվածքը և ընդամենը մասը տեղափոխել վերջում:

Վերջին առաքելության զեկույցի աղյուսակը համապատասպան է ԵՄ օրենսդրությանը, սակայն ազգային պահանջները պահանջում են ավելի շատ փոփոխականներ անասնագլխաքանակի վերաբերյալ: Առաջարկվում է հետևյալը՝

VIII բաժին, Կենդանիներ, թռչուններ, մեղուներ և այլ անասուններ

Ձիեր
զամբիկներ, երեք տարեկան և ավելի
հովատակեր
մտրուկներ
Ձիեր, ընդամենը (=ձիերի ընդհանուր քանակը)

ավանակներ, ընդամենը
ձիուկներ, ընդամենը
total ջորիներ, ընդամենը

Խոշոր եղջերավոր անասուններ
էգ և արու հորթեր մինչև 1 տարեկան
երինջներ, 1-2 տարեկան
երինջներ 2 տարեկանից բարձր
ցլիկներ 1-2 տարեկան
ցլիկներ 2 տարեկանից բարձր
հորթեր
կաթնատու կովեր
Այլ կովեր (կաթնակեր կովեր)
ցուլեր ծառայեցման համար
Այլ կենդանիներ (խոշոր եղջերավոր անասուններ գիրացման համար)
ցուլ
խոշոր եղջերավոր անասուններ, ընդամենը

Գոմեշներ, ընդամենը

Խոզեր
Վարազ (օգտագործվում է ծառայեցման համար)
մայր խոզեր
էգ խոզեր կազմալրման համար (4-12 ամսեկան)
խոճկորներ, 20 կգ-ից պակաս կենդանի քաշով
խոզեր 20-49 կգ
ճարպային գեր խոզեր 50 կգ և ավելին
խոզեր ընդամենը

Ոչխարներ
մինչև 1 տարեկան գառներ
գառներ
մաքիներ (մազմացող էգ ոչխարներ)
խոյեր (օգտագործվում են ծառակեցման համար)
Այլ խոզեր
Ոչխարներ, ընդամենը

Այծեր
ուլեր (մինչև 1 տարեկան)
մայր այծեր (բազմացող էգ այծեր)
այծեր (օգտագործվում է ծառայցման համար)
Այլ այծեր
Այծեր, ընդամենը

Թռչուններ
ածան հավեր

բրոյլերներ
հնդկահավեր, ընդամենը
սագեր, ընդամենը
բադեր, ընդամենը
Այլ թռչուններ, որոնք պահվում են տնտեսությունում
Թռչուններ, ընդամենը

Ճագարներ, ընդամենը
Որից մայր ճագարներ (բազմացող ճագարների ընդհանուր թիվը)

Մորթատու գազաններ, ընդամենը
Որից մայրեր (բազմացող էգ կենդանիների ընդհանուր թիվը)

Մեղուներ (մեղվաընտանիքների ընդհանուր թիվը)

Այլ կենդանիներ

Անհրաժեշտ է դիտարկել, թե արդյոք կենդանիների ցանկը ամբողջական է: Եթե ոչ, ապա կարելի է ավելացնել ևս մեկ կետ՝ <<Այլ>> :

ԵՄ կանոնակարգը պահանջում է ունենալ խոզերի 3 խմբեր:

Խոճկորներ, որոնց կենդանի քաշը 20 կգ-ից պակաս է:
Բուծման խոզեր, որոնց քաշը 50 կգ և ավելին է
Այլ խոզեր (այստեղ ներառվում են բոլոր այլ խոզերը, արուները)

Նման պարզեցված հարցերով ակնկալվում է, որ պատասխանների որակը բարձր կլինի:

XII բաժին, Առկա գյուղատնտեսական նշանակության շենքեր և շինություններ

Ներկայիս աղյուսակի ուսումնասիրությունը (անասունների համար նախատեսված գյուղատնտեսական շինություններ): Միավորը գլխաքանակն է (շինությունների թողունակությունը), սակայն պետք է հաշվի առնել, որ մեկ խոշոր եղջերավոր անասունը պահանջում է ավելի շատ տարածք, քան բրոյլերը կամ ոչխարը: Եվ ավելին, շենքը կարող է օգտագործվել տարբեր տեսակի կենդանիների համար այլ ոչ միայն մեկ տեսակի համար: Կրկին նկատի ունեցեք այս հարցերը, թե ինչպիսի տեղեկատվություն է անհրաժեշտ: Հնարավոր է արդյոք ստանալ պատասխանները: Միգուցե առավել իրատեսական է հարցնել, թե արդյոք կան շինություններ կենդանիների համար – անհրաժեշտ է տալ շինությունների սահմանումը: Եթե պատասխանը <<Այո>> է, ապա հարցրեք թե ինչ տեսակի անասուններ են դրանք և ինչ չափի է այդ շինությունը- տարողունակության մակերեսը (քառակուսի մետր)

XIII բաժին, Աշխատուժ

Այս աղյուսակները ամենաբարդն են հարցաթերթիկում ուստի հրահանգները պետք է լինեն չափազանց սպառիչ: ԱՊ փորձագետները առաջարկում են ավելի շատ ժամանակ տրամադրել այս աղյուսակների վերաբերյալ աշխատանքներին: Կարելի է դիտարկել <<օգնության աղյուսակների/հարցաթերթիկների>> մշակումը:

Առաջարկվում է, որ աշխատուժը ներկայացվի ըստ օրերի, քանի որ ինչպես փորձարկումը ցույց տվեց շատ դժվար է ներկայացնել տարվա մեջ աշխատած ժամերի քանակը: Փորձը ցույց տվեց, որ անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու համար հարցազրուցավարը շատ հաճախ պետք է անդրադառնա յուրաքանչյուր բաժնի տեղեկատվությանը՝ պատասխաններ ստանալու համար: Այնուհետև աշխատած օրերի քանակը կարելի է միայն որոշել մոտավորապես: Փորձը ցույց տվեց, որ տնտեսության անդամների վերաբերյալ աղյուսակը շփոթմունք է առաջացնում, հատկապես տարիքային ինտերվալների տեսանկյունից: Որպես օրինակ ներկայիս աղյուսակը կարող է փոխարինվել հետևյալով (նույնպես ներառելով հարցեր տնտեսության ղեկավարի վերաբերյալ):

					Աշխատանքի ոլորտը		
No.	Անդամը	Տարիքը	Սեռը	Կրթությունը	Միայն տնտեսությունում	Կես դրույք	Լրիվ դրույք
1	Օրինակ – ղեկավարը						
2	Օրինակ-ամուսին/կին						
3	Օրինակ –տղան 1						
4	Օրինակ – աղջիկը 1						
5	Այլն						

Որպես <<օգնության աղյուսակ/հարցաթերթիկ>> աշխատաժամանակի վերաբերյալ կարող է հանդսանալ հետևյալ առաջարկությունը տնտեսության անդամների համար: Այս աղյուսակից, կարելի է ստանալ բնօրինակը՝ բարձր աստիճանի ճշգրտությամբ:

	հունվար – մարտ		ապրիլ – հունիս		հուլիս - սեպտեմբեր		հոկտեմբեր-դեկտեմբեր	
Անդամը	Օրեկան միջին ժամաքանակը	Աշխատանքի տեսակը (1)	Օրեկան միջին ժամաքանակը	Աշխա-տանքի տեսակը (1)	Օրեկան միջին ժամա-քանակը	Աշխատանքի տեսակը (1)	Օրեկան միջին ժամա-քանակը	Աշխատանքի տեսակը (1)
1								
2								
3								

1) Բացատրություն

Հարցաթերթիկի նոր տարբերակում աղյուսակները վարձու աշխատակիցների վերաբերյալ պարզեցված են այո/ոչ պատասխանների համար, սակայն ԵՄ օրենսդրության համաձայն, աշխատաժամերի վերաբերյալ տեղեկատվությունը 5 ինտերվալներով պետք է ներկայացվի: Սա բարդ թեմա է և հետևաբար հրահանգները պետք է ներառեն օրինակներ, թե ինչ պետք է

ներառվի աշխաուժի մեջ: Օրինակ տրակտորային ծառայությունների վարձումը և այլ գյուղատնտեսական ծառայություններ չպետք է դիտարկվի որպես վարձու աշխատանք:

Փորձարկման ժամանակ ի հայտ եկավ հետևյալ հարցը. հովվի աշխատանքի գումարը սովորաբար կիսվում է մի քանի տնտնեսությունների միջև (հաճախ նաև ամբողջի գյուղի միջև) – սա պետք է որպես մեթոդաբանության մի մաս ներկայացվի՝ կրկնահաշվարկներից խուսափելու համար: Այդ իսկ պատճառով ԱՊ փորձագետները առաջարկում են նոր աղյուսակ տնտեսության մեջ վարձու աշխատակիցների աշխատանքի համար: Սակայն անհրաժեշտ է ունենալ հստակ սահմանում աշխատանքի տեսակի, և հավանաբար նաև կրթության վերաբերյալ:

	հունվար-մարտ		ապրիլ-հունիս		հուլիս-սեպտեմբեր		Հոկտեմբեր-դեկտեմբեր	
Վարձու աշխատողի սեռը	Օրեկան միջին ժամաքանակը	Աշխատանքի տեսակը (1)	Օրեկան միջին ժամաքանակը	Աշխատանքի տեսակը (1)	Օրեկան միջին ժամաքանակը	Աշխատանքի տեսակը (1)	Օրեկան միջին ժամաքանակը	Աշխատանքի տեսակը (1)
…								

1) տես բացատրությունը

XV բաժին

Ներկայիս աղյուսակի ուսումնասիրությունը. իրականում հնարավոր չէ օգտագործել այս տեղեկատվությունը, քանի որ հայտնի չէ, թե արտադրության որքան մասնաբաժինն է օգտագործվում սեփական նպատակների համար:

Հայաստանի Ազգային հաշիվների համար ցանկալի է հարցաթերթիկում ներառել սեփական սպառումը, որպեսզի հնարավոր լինի շատ ավելի լույս սփռել Հայաստանի ոչ ֆորմալ տնտեսության այս խիստ կարևոր հատվածում:

Առաջարկություններ

1. Նոր վերնագիր. Տնտեսության արտադրության ծավալների օգտագործումը
2. Նոր նախագծում (դիզայն)

Բաժին XV Տնտեսության արտադրման ծավալների օգտագործումը (տոկոսներ)

No		Ընդամենը	Սպառվել է կամ օգտագործ-վել է տնտեսու-թյան կողմից	Փոխանակ վել է այլ ապրանքների հետ	Վաճառվել է տնտեսությունից	Վաճառվել է շուկայում	Վաճառվել է վերամշակող կազմակերպություններին
	Հացահատիկ և հատիկաընդեղեն	100					
	Կարտոֆիլ	100					
	Բանջարեղեն	100					

	Պարենային բոստան	100					
	Միրգ և հատապտուղ	100					
	Խաղող	100					
	Միս	100					
	Մսամթերք	100					
	Կաթ	100					
	Կաթնամթերք	100					
	Ձու	100					
	Մեղր	100					
	Բուրդ	100					

Հավելված 7. Գյուղատնտեսական համատարած հաշվառման հարցաթերթիկ (նախագիծ 25 Հունիսի, 2012)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 20 ____ ԹՎԱԿԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՈՒՄ

Նախագիծ
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
վիճակագրության պետական խորհրդի
20 թ. թիվ որոշմամբ

ԲՆԱԿԵԼԻ ՄԻԱՎՈՐ N ☐☐☐ ՀԱՐՑԱԹԵՐԹ N ☐☐☐

1. Տեղամասեր

1.1 Հաշվառման ☐☐ 1.2 Հրահանգչական ☐☐ 1.3 Հաշվային ☐☐☐

2. Մարզ _____ կոդը ☐☐
անվանումը

3. Համայնք _____ կոդը ☐☐☐
անվանումը

4. Գտնվելու վայրը _____
հասցեն

5. Տնտեսության գլխավոր _____
անուն, ազգանուն

5.1Գլխավորի սեռը արական ☐ իգական ☐

5.2 Տարիքը ☐ 5.3 Կրթությունը ☐

6. Ո՞վ է հանդիսանում տնտեսության կառավարիչը

☐ ☐ ☐

6.1 տնտեսության գլխավորը 6.2 տնտեսության այլ անդամ 6.3 այլ անձ

Հաշվարար՝ _____ _____
ստորագրություն լրացման ամսաթիվ

Հրահանգիչ-հսկիչ՝ _____ _____
ստորագրություն ստուգման ամսաթիվ

II. *Գյուղատնտեսական հողատարածքը* *(առանց տնամերձի)* (առ _____ դրությամբ)

հա

(0,0)

		սեփական		վարձակալված*	Տնտեսությունը տնօրինում է
		ընդամենը	*որից տրված է՝ վարձակալության*		
N	Ա	Բ	Գ	Դ	Ե
	Ընդամենը գյուղատնտեսական հողատեսքեր				
	Վարելահող				
	Պտղատու այգի և հատապտղանոց				
	Խաղողի այգի				
	Բնական խոտհարք				
	Արոտավայր				
	Այլ հողեր				

*) Եթե վարձակալված հողը գտնվում է համայնքի վարչական տարածքից դուրս, ապա դրա վերաբերյալ տվյալները լրացնել բաժին XVI, էջ 7:

III. *Տնամերձ հողատարածքը, որն օգտագործվում է գյուղատնտեսական նպատակով*

(առ _____ դրությամբ)

Ñ³ (0,0)

	Տնամերձ, ընդամենը	
	որից՝ բազմամյա տնկարկ	

IV. *Մշակվող գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները* *(առանց տնամերձի)*

(առ _____ դրությամբ)

հա (0,0)

		Ընդամենը	*որից՝* ոռոգվող	Փաստացի ոռոգվել է
N	Ա	Բ	Գ	Դ
	Ընդամենը ցանքատարածություններ			
	Հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսեր, ընդամենը			
	այդ թվում՝ ***աշնանացան հացահատիկային մշակաբույսեր, ընդամենը***			

	որից՝ աշնանացան ցորեն			
	աշնանացան գարի			
	գարնանացան հացահատիկային մշակաբույսեր, ընդամենը			
	որից՝ գարնանացան ցորեն			
	գարնանացան գարի			
	հաճար			
	հատիկաընդեղենային մշակաբույսեր, ընդամենը			
	Կարտոֆիլ			
	Բանջարանոցային մշակաբույսեր, ընդամենը			
	այդ թվում՝ կաղամբ			
	վարունգ			
	լոլիկ			
	սմբուկ			
	պղպեղ			
	սոխ			
	սխտոր			
	այլ			
	Բոստանային մշակաբույսեր			
	Տեխնիկական մշակաբույսեր, ընդամենը			
	այդ թվում՝ ծխախոտ			
	յուղատու			
	Սունկ		x	x
	Կերային մշակաբույսեր, ընդամենը			
	այդ թվում՝ միամյա խոտաբույսեր			
N	**Ա**	**Բ**	**Գ**	**Դ**
	բազմամյա խոտաբույսեր			
	այլ			
	Ցելեր բոլոր տեսակների			

V. *Առկա բազմամյա տնկարկների տարածությունները* ***(առանց տնամերձի)*** (առ _____ դրությամբ)

հա (0,0)

		Ընդամենը	*որից՝* բերքատու հասակ	**Ընդամենից ոռոգվող**	*որից՝* բերքատու հասակի
N	**Ա**	**Բ**	**Գ**	**Դ**	**Ե**
	Պտուղ և հատապտուղ, ընդամենը *այդ թվում՝*				
	հնդավորներ, ընդամենը *այդ թվում՝* խնձոր				
	տանձ				
	սերկևիլ				
	այլ				
	կորիզավորներ, ընդամենը *այդ թվում՝* ծիրան				
	դեղձ				
	կեռաս				
	սալոր				
	բալ				
	հոն				
	այլ				
	ընկուզապտուղներ, ընդամենը *այդ թվում՝* ընկույզ				
	տխիլÉ (պնդուկ)				

	նուշ				
	այլ				
	յուղատուներ, ընդամենը *այդ թվում՝* ձիթապտուղ				
	այլ				
	մերձարևադարձայիններ, ընդամենը *այդ թվում՝* թուզ				
	նուռ				
	արքայանարինջ (կարալյոկ)				
	այլ				
	հատապտուղներ (թութ, գետնամորի, ելակ, հաղարջ և այլն, ներառյալ պտղատու տնկարկների միջշարքային տարածություններում տնկվածը), ընդամենը				
	որից՝ թութ				
	Խաղող, ընդամենը				
	որից՝ տեխնիկական				

VI. *Օգտագործված պարարտանյութերը և թունաքիմիկատները*

		Այո	Ոչ
	Օգտագործվե±լ են հանքային պարարտանյութեր		
	Օգտագործվե±լ են օրգանական պարարտանյութեր		
	Օգտագործվե±լ են բուժանյութեր և թունաքիմիկատներ		

VII. *Ջերմոց/ջերմատան առկայությունը*

(առ _____ դրությամբ)

/քառ./մետր/

	Ընդհանուր տարածությունը	
	որից՝ բանջարանոցային մշակաբույսեր աճեցնելու համար	

VIII. *Գյուղատնտեսական կենդանիների և թռչունների առկա գլխաքանակը* (առ _____ դրությամբ)

/գլուխ/

		Ընդամենը	*որից՝* սեփական
N	**Ա**	**Բ**	**Գ**
	Խոշոր եղջերավոր անասուններ, ընդամենը		
	որից՝ կովեր		
	որից՝ կաթնային հոտի կովեր		
	արտադրող ցուլեր		
	բանող եզներ		
	էգ և արու հորթեր մինչև 1 տարեկան		
	երինջներ 1-ից մինչև 2 տարեկան		
	ցլիկներ 1-ից մինչև 2 տարեկան		
	երինջներ 2 տարեկանից բարձր		
	ցլիկներ 2 տարեկանից բարձր		
	չսերմնավորված Է՝ մոզիներ[a] 2 տարեկանից բարձր		
	այլ սեռատարիքային խմբերի խոշոր եղջերավոր անասուններ		
	Գոմեշներ		
	որից՝ մատակներ		
	գոմշացուլեր		
	այլ սեռատարիքային խմբեր		
	Խոզեր, ընդամենը		
	որից՝ մայր խոզեր հիմնական հոտի		

	էգ խոզեր կազմալրման համար՝ 4-12 ամսական			
	Ընդամենը խոզերի գլխաքա-նակից (բացառելով 126 և 127 տողերի գլխաքանակը)	մինչև 20 կգ		
		21-50 կգ		
		51 կգ և ավելի		
	Ոչխարներ բոլոր ցեղերի, ընդամենը			
	որից՝ մաքիներ			
	խոյեր			
	միչև 1 տարեկան գառներ			
	շիշակներ			
	Այծեր, ընդամենը			
	որից՝ մայր այծեր			
	նոխազներ			
	միչև 1 տարեկան ուլեր			
	Ձիեր, ընդամենը			
	որից՝ զամբիկներ 3 տարեկան և ավելի			
	հովատակեր			
	մտրուկներ			
	Ճագարներ, ընդամենը			
	որից՝ մայր ճագարներ			
	Թռչուններ, ընդամենը			
	որից՝ ածան հավեր			
	այլ հավեր			
	բրոյլերներ			
	հնդկահավեր			
	սագեր			
	բադեր			
	այլ թռչուններ			
	Մորթատու գազաններ			
	որից՝ մայրեր			
	Մեղվաբնտանիքներ, հատ			
	Ավանակներ			
	Ջորիներ			

IX.Գյուղացիական տնտեսությունում զբաղվում եք ձկնորսությամբ և ձկնաբուծությամբ (հարցման պահին)

այո ☐ **ոչ** ☐

X. *Գյուղատնտեսական տեխնիկայի և սարքավորումների առկայությունը* (առ _____ դրությամբ)

/հատ/

		Քանակը	*որից՝* սարքին
N	**Ա**	**Բ**	**Գ**
	Տրակտորներ		
	որից՝ թրթուրավոր		
	անիվավոր		
	Բեռնատար ավտոմեքենաներ		
	Հացահատիկահավաք կոմբայններ		
	Կերահավաք կոմբայններ		
	Խոտհնձիչներ		
	Շարքացաններ		

	Կուլտիվատորներ		
	Կաթ վերամշակող սարքավորում		
	Այլ(նշել)		

XI. Օգտագործվե±լ է արդյոք գյուղատնտեսական աշխատանքներում կենդանի բանող ուժ

այո ☐ ոչ ☐

XII. *Առկա գյուղատնտեսական նշանակության շենքեր և շինություններ*

Շենքեր և շինություններ նախատեսված անասուններ պահելու համար

Խոշոր եղջերավոր անասուններ պահելու համար (գլուխ) ☐

Խոզանոցներ (գլուխ) ☐ Թռչնանոցներ (գլուխ) ☐

Ոչխարանոցներ (գլուխ) ☐ Այլ (նշել) _____(գլուխ) ☐

Շինություններ գյուղատնտեսական մթերքի երկարատև պահպանման համար

Պահեստարաններ (տոննա) ☐ Սառնարաններ (տոննա) ☐

	այո	ոչ
Շենքեր և շինություններ գյուղատնտեսական տեխնիկայի պահպանման համար	☐	☐
Շենքեր և շինություններ գյուղատնտեսական սարքերի և սարքավորումների պահպանման համար	☐	☐
Գյուղատնտեսական տեխնիկայի նորոգման և տեխնիկական խնամքի կարողություններ	☐	☐

Գյուղատնտեսական նշանակության այլ շենքեր և շինություններ (նշել) _____

_____

_____

XIII. *Աշխատուժ*

	Տնտեսության անդամներն ըստ տարիքի և սեռի	Ընդամենը	*այդ թվում՝*	
			տղամարդ	կին
	Ընդամենը			
	0-14			

	15-19			
	20-44			
	45-64			
	65 և ավելի			

Տնտեսության անդամների (15 տարեկան և բարձր) ծախսած աշխատաժամանակը

	Սեռը՝ արական =1 իգական =2	Կրթությունը* (տես ծածկագրերը)	*Տնտեսության անդամների ծախսած աշխատաժամանակը, (մարդ/ժամ)*						
			գյուղատնտեսության ոլորտում					*այլ ոլորտում*** (տես ծածկագրերը)	
			1-499	500-899	900-1349	1350-1799	1800 և ավել	մասնակի	ամբողջությամբ

*) 0-Հետբուհական
1- Բարձրագույն
2 - Թերի բարձրագույն
3 - Միջին մասնագիտական
4 - Նախնական մասնագիտական
5 - Ընդհանուր միջնակարգ (լրիվ)
6 - Ընդհանուր հիմնական
7- Ընդհանուր տարրական
8- Չունի տարրական
9- Դժվարանում եմ պատասխանել

**) 1- Արդյունաբերություն
2- Շինարարություն
3- Կրթություն
4- Առևտուր և ծառայություն
5 - Պետական,համայնքային կամ այլ հիմնարկ
6- Առողջապահություն
7- Գյուղատնտեսություն
8- այլ ոլորտ

Տնտեսությունը օգտվում է վարձու աշխատողների ծառայություններից այո ☐ ոչ ☐

XIV. *Պարենային ապահովությունը*

Գյուղացիական տնտեսությունում արտադրված գյուղատնտեսական մթերքն օգտագործվում է միայն սեփական±ն կարիքների համար

այո ☐ ոչ ☐

Տնտեսությունում զբաղվում±մ եք գյուղատնտեսական մթերքի վերամշակմամբ

այո ☐ ոչ ☐

XV. *Տնտեսությունում արտադրված գյուղատնտեսական մթերքի իրացումը (վաճառքը)*

/տոկոս/

		Իրացվել է (վաճառվել)	այդ թվում՝		
			տնտեսությունից	շուկայում	վերամշակող կազմակերպությանը
N	Ա	Բ	Գ	Դ	Ե
	Հացահատիկ և հատիկաընդեղեն	100			
	Կարտոֆիլ	100			
	Բանջարեղեն	100			
	Պարենային բոստան	100			
	Պտուղ և հատապտուղ	100			
	Խաղող	100			
	Միս	100			
	Մսամթերք	100			
	Կաթ	100			
	Կաթնամթերք	100			
	Ձու	100			
	Մեղր	100			
	Բուրդ	100			
	Այլ (նշել)	100			

XVI. *Տնտեսությանը պատկանող գյուղատնտեսական հողատեսքերն այլ բնակավայրերում*

Համայնքի անվանումը _____ [ ] կոդը

Մարզի անվանումը _____ [ ] կոդը

հա (0,0)

		Ընդամենը
	Ընդամենը գյուղատնտեսական հողատեսքեր	
	Վարելահող	
	Պտղատու այգի և հատապտղանոց	
	Խաղողի այգի	
	Բնական խոտհարք	
	Արոտավայր	
	Այլ հողեր	

Համայնքի անվանումը _____ [ ] կոդը

Մարզի անվանումը _____ [ ] կոդը

հա (0,0)

		Ընդամենը
	Ընդամենը գյուղատնտեսական հողատեսքեր	
	Վարելահող	
	Պտղատու այգի և հատապտղանոց	
	Խաղողի այգի	
	Բնական խոտհարք	
	Արոտավայր	
	Այլ հողեր	

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Հավելված 8 Գյուղատնտեսության համատարած հաշվառումը Հայաստանում- ռազմավարական փաստաթղթի ներդրում

Սույն հայեցակարգային փաստաթուղթը (ռազմավարական փաստաթուղթ) մշակվել է ԹՄԽ-ի և ԱՄՆ գյուղդեպարտամենդի միջև համագործակցության արդյունքում ունենալով նաև ԱՊ բաղադրիչի ղեկավարի ներդրումը, այն կազմվել է 2011 թվականի դեկտեմբեր ամսին և անմիջապես թարգմանվել է:

Գյուղատնտեսության համատարած հաշվառումը Հայաստանում – հայեցակարգի ներդրում

Գյուղատնտեսության վերաբերյալ օրենքը ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունվել է 2008 թվականին: Օրենքում նշվում է, որ Գյուղատնտեսության համատարած հաշվառումը պետք է իրականացվի տասը տարին մեկ՝ համաձայն Միավորված Ազգերի Կազմակերպության նվազագույն պահանջին:

Սույն փաստաթուղթը նկարագրում է Գյուղատնտեսության համատարած հաշվառման հայեցակարգը և բնույթը: Այն նաև ներկայացնում է Հայաստանում Գյուղատնտեսության համատարած հաշվառման իրականացման տարբեր սցենարներ՝ ներառյալ բյուջետային հետևանքները: Նախ, փաստաթուղթը ներկայացնում է հինգ պատճառներ, թե ինչի համար է անհրաժեշտ Գյուղատնտեսության համատարած հաշվառումը իրականացնել ավելի վաղ, քան ավելի ուշ:

1. **Հինգ պատճառներ Հայաստանում Գյուղատնտեսության համարած հաշվառում իրականացնելու համար**

1. *Սննդամթերքի գները, որոնք վճարվում են Հայաստանի հանրապետության քաղաքացու կողմից բավականին բարձր են*

Հայաստանի գյուղատնտեսության սեկտորի իրական չափը և գյուղատնտեսական արտադրանքի չափը կարող է հեշտությամբ կրճատվել 20-30 տոկոսով կամ ավելին՝ պաշտոնական վիճակագրության համեմատությամբ: Իրական մակարդակը հնարավոր կլինի պարզել միայն Գյուղատնտեսության համատարած հաշվառման միջոցով և միայն դրանով, որպես ելակետային չափանիշ, Հայաստանի համար հնարավոր կլինի իրականացնել արդյունավետ գյուղատնտեսության քաղաքականություն, այդ թվում նաև խթանիչ կառուցվածքի ստեղծում՝ առավել արդյունավետ գյուղացիական տնտեսություններ ստեղծելու և գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործումը բարելավելու համար, որոնք երկու դեպքերում էլ կհանգեցնեն սննդամթերքի գների նվազեցմանը:

2. *Հայաստանում գյուղատնտեսության ոլորտի ներդրումները բավականին ցածր են*

Ներկայումս շատ քիչ բան է հայտնի գյուղատնտեսության ոլորտի մանրամասն կառուցվածքի վերաբերյալ: Առավել շատ ներդրողներ ներգրավելու նպատակով՝ կապված տեխնիկայի, շինությունների, հողերի, անասունների և այլնի հետ, բացարձակ անհրաժեշտություն կա

ունենալ մանրամասն տեղեկատվություն կոնկրետ աշխարհագրական գոտիների (շրջանների) վերաբերյալ, կոնկրետ մշակաբույսերի և անասունների վերաբերյալ: Առանց այս տեղեկատվության, ներդրողները հակված չեն լինի ներդրումներ կատարել Հայաստանի գյուղատնտեսության ոլորտում:

3. *Պարարտանյութերի և թունաքիմիկատների օգտագործումը արդյունավետ չէ*

Պարարտանյութերի և թունաքիմիկատների սուբսիդավորումը և հարկերի գանձումը անմիջական ազդեցություն ունի դրանց օգտագործման վրա: Գյուղատնտեսության համատարած հաշվառումը տեղեկատվություն կտրամադրի ինչպես այս նյութերը իրենց հողատարածքներում օգտագործող ֆերմերների ընդհանուր նկարագրության վերաբերյալ, այնպես էլ այն մասին, թե Հայաստանում որտեղ են դրանք իրականացվում: Բացի այդ, արդյունավետ բնապահպանական քաղաքականությունը ստորերկրյա ջրերի և գետերի ու լճերի պահպանման վերաբերյալ սերտորեն կախված է պարարտանյութերի և թունաքիմիկատների օգտագործման վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունից, որը հասանելի կլինի միայն Գյուղատնտեսության համատարած հաշվառումից հետո:

4. *Գյուղական բնակչությունը հավանաբար առաջիկա տարիներին կտրուկ կնվազի*

Հայաստանի հանրապետության աշխատուժի 30-40 տոկոսը պատկանում է գյուղատնտեսության ոլորտին: Վերջին տարիներին այս մասնաբաժինը նվազել է: Քանի որ ամենայն հավանականությամբ այս տենդենցը կշարունակվի, ապա Գյուղատնտեսության համատարած հաշվառման տեղեկատվությունը աշխատուժի կազմի վերաբերյալ, ինչպիսին է օրինակ տարիքային կառուցվածքը և կրթական մակարդակը, հսկայական արժեք կունենա քաղաքականություն կերտողների և պլանավորումների համար:

5. *Անասունների վարակիչ հիվանդությունների դեմ պատրաստվածությունը պետք է բարելավվի*

Սալմոնելոզային վարակների բռնկումները, կատաղի կովի հիվանդությունը, խոզի գրիպը կամ այլ վարակիչ հիվանդություններ հաճախ խուճապ են առաջացնում ֆերմերների շրջանում, քանի որ նրանց կյանքին անմիջական վտանգ է սպառնում: Այդ իսկ պատճառով, ազգային մակարդակում անհրաժեշտ է ձեռնարկել համապատասխան նախապատրաստական միջոցառումներ: Անասնաբուժներին պետք է անմիջական հասանելի լինեն պատվաստանյութերը և պատշաճ դեղորայքը: Սույն համակարգը կարող է արդյունավետ մշակվել Գյուղատնտեսության համատարած հաշվառումից ստացված տեղեկատվության հիման վրա:

2. Ինչ է Գյուղատնտեսության համատարած հաշվառումը

Փաստաթղթի այս բաժինը դեռևս ավարտված չէ:
Ըստ ՊԳԿ Համաշխարհային ծրագրի Հայաստանի Գյուղատնտեսության համատարած հաշվառման վերաբերյալ 2010 թվականին …

Գյուղատնտեսության համատարած հաշվառումը վիճակագրական գործողություն է գյուղատնտեսության կառուցվածքի վերաբերյալ տվյալների հավաքագրման, մշակման և տարածման համար՝ ընդգրկելով ամբողջ երկիրը կամ դրա մի զգալի մասը:

Գյուղատնտեսության համատարած հաշվառման ժամանակ հավաքագրված բնորոշ կառուցվածքային տվյալներից են տնտեսության չափը, հողի վարումը, հողի օգտագործումը, մշակաբույսերի բերքի տարածքները, ոռոգումը, անասնագլխաքանակը, աշխատուժը և այլ գյուղատնտեսական միջոցներ: Գյուղատնտեսության համատարած հաշվառման մեջ տվյալները անմիջապես հավաքագրվում են գյուղացիական տնտեսություններից, սակայն հնարավոր է, որ հավաքագրվեն նաև որոշ տվյալներ համայնքների մակարդակով: Գյուղատնտեսության համատարած հաշվառումը սովորաբար իրենից ներկայացնում է հիմնական կառուցվածքային տվյալների հավաքագրում բոլոր գյուղացիական տնտեսությունների համապարփակ հաշվառման միջոցով՝ համատեղելով դրանք առավել մանրամասն կառուցվածքային տվյալների հետ՝ օգտագործելով ընտրանքային մեթոդները:

3. Գյուղատնտեսության համատարած հաշվառման տարբեր սցենարներ

Ներկայումս, համարվում է, որ Հայաստանում գոյություն ունեն մոտավորապես 340,000 գյուղացիական տնտեսություններ (ֆերմաներ): Բացի այդ, գոյություն ունեն մոտավորապես 60,000 ամառանոցներ և 100,000 քաղաքաբնակների տնտեսություններ, որոնք զբաղվում են գյուղատնտեսական արտադրությամբ:

Տվյալները կարդիականացվեն, երբ պատրաստ լինեն Մարդահամարի արդյունքները, որն ակնկալվում է 2012 թվականի Հուլիսին: Առայժմ սրանք են այն տվյալները, որ նկարագրում են Գյուղատնտեսության համատարած հաշվառման վիճակագրական համակցությունը, և տարբեր սցենարներ և բյուջեի հաշվարկներ պետք է հիմնված լինեն դրանց վրա մինչև 2012 թվականի Հուլիս ամիսը:

Գոյություն ունեն երկու հիմնական որոշումներ, որոնք ազդեցություն ունեն ինչպես Գյուղատնտեսության համատարած հաշվառման ակնկալվող արդյունքների, այնպես էլ համատարած հաշվառման ընդհանուր ծախսերի վրա՝ առաջինը կապված է ժամկետների հետ, իսկ երկրորդը վերաբերվում է ընտրանքի չափին:

3.1 Ընտրանքի տարբերակներ՝ չորս տարբեր սցենարներ

[1]Ստորև բերված օրինակներում, 340,000 տնտեսություններից 40,000 համարվում են խոշոր և 300,000 համարվում են փոքր: Այս բաժնեմասը ընտրվել է հիմնվելով սահմանափակ տեղեկատվության վրա (1), և հավանաբար միայն Մարդահամարի արդյունքները կարող են տրամադրել առավել ճշգրիտ հաշվարկներ, որն էլ միաժամանակ հնարավորություն կտա կազմել առավել ճշգրիտ բյուջե:

1

Այսպիսով մեկ “պայմանական” տնտեսությունը ներգրավված է 4-8 գյուղատնտեսական արտադրանքի արտադրության մեջ, տնօրինում է 1.4 հեկտար հողատարածքի (որից 1.1 հեկտարը վարելահող է), 1.6 անասնագլխաքանակ (որից 0.8 կովեր են), 1.7 ոչխարներ և այծեր, 0.2 խոզեր: Համաձայն որի, տնտեսությունները բնութագրվում են փոքր չափերով, առանց որևէ հաշվապահական հաշվառման իրականացման տնտեսության մեջ և իրացվելիության ցածր մակարդակով: Սակայն, ընդհանուր առմամբ, գյուղատնտեսության համախառն արտադրանքի մոտավորապես 90 տոկոսը պատկանում է այս տնտեսություններին: (“Գյուղատնտեսության Ընտրանքային Հետազոտության” Զեկույցից 2008 թվական, ՀՀ ԱՎԾ Շվեդական Միջազգային Զարգացման Գործակալություն);

Առանց բյուջետային սահմանափակումների, նախընտրելի տարբերակը դա աղյուսակ 1 –ում նշված 1 սցենարն է: Այդ սցենարում, բոլոր 500,000 տնտեսությունները, որոնք Մարդահամարի ժամանակ ներկայացրել են, որ ներգրավված են գյուղատնտեսական արտադրանքի արտադրության մեջ ԳՀՀ-ի մեջ կհարցվեն մանրամասնորեն:

Աղյուսակ 1: Տարբեր սցենարների օրինակներ և ԳՀՀ-ի ծախսերի հետևանքները

	Հարցազրույցներ	Ընդհանուր արժեքը	Մեծ տնտեսություններ		Փոքր տնտեսություններ		Քաղաքային տնտեսություններ		Ամառանոցներ	
	1,000's	*տոկոս*	*1,000's*	*ամբողջի տոկոսը*	*1,000's*	*ամբողջի տոկոսը*	*1,000's*	*ամբողջի տոկոսը*	*1,000's*	*ամբողջի տոկոսը*
Սցենար 1	500	100	40	100	300	100	100	100	60	100
Սցենար 2	380	85	40	100	300	100	25	25	15	25
Սցենար 3	230	55	40	100	150	50	25	25	15	25

Սցենար 2 ներկայացնում է ընտրանքի իրականացում քաղաքաբնակների տնտեսությունների և ամառանոցների շրջանում: Սա կնվազեցնի հարցազրույցների քանակը մոտավորապես 120,000 –ով: Քանի որ Գյուղատնտեսության համատարած հաշվառման հետ կապված որոշ ծախսեր ֆիքսված են, ուստի ծախսերի նվազեցման հաշվարկը գնահատված է միայն 15 տոկոս:

Սցենար 3 ներկայացնում է հետագա որոշակի լուրջ ընտրանքներ փոքր տնտեսությունների շրջանում՝ միաժամանակ ընտրանք իրականացնելով քաղաքաբնակների տնտեսությունների մեջ և ամառանոցների շրջանում: Սա կրճատում է հարցազրույցների քանակը 270,000-ով՝ սցենար 1-ի համեմատությամբ և ծախսերը կոպիտ հաշվարկով գնահատվում են մոտ 55 տոկոսի չափով:

Պետք է նշել, որ սցենար 1-ից բացի այլ տարբերակները զուտ դիտարկվել են հաշվի առնելով բյուջեի սահմանափակումները, և որովհետև պետք է գիտակցել, որ խնդիրն այն է, որ ունենալով ֆիքսված բյուջե կարելի է ստանալ առավելագույնս լավ արդյունքներ: Այլ սցենարներ և/կամ այլ ընտրանքի չափեր իհարկե կարելի է ձևավորել: Հիմնական գաղափարն այն է, որ օգտագործելով Մարդահամարի տվյալները գյուղատնտեսության ոլորտի վերաբերյալ և կիրառելով համապատասխան գյուղատնտեսական վիճակագրական մեթոդներ, դեռևս հնարավոր է ստանալ վստահելի տվյալներ Գյուղատնտեսության համատարած հաշվառման համար:

Հարկ է նշել, որ ամբողջական հետազոտության բյուջեն, այսինքն՝ մոտավորապես 500,000 հարցազրույցներ, ներկայումս հաշվարկված է 6-7 միլլիոն ԱՄՆ դոլլար բյուջեյի դեպքում՝ ելնելով նրանից, թե Մարդահամարի ենթակառուցվածքները որքանով հնարավոր կլինի վերաօգտագործել:

3.2 Ժամկետները – 2013 թվականի Դեկտեմբերից առաջ կամ հետո

Մարդահամարը Հայաստանում իրականացվել է 2011 թվականի Հոկտեմբեր ամսին, որը հաջորդեց 2011 թվականի Հուլիսի վերջին Մարդահամարի ֆինանսավորման հետ կապված Կառավարության վերջնական որոշմանը : Վերջնական պլանավորումը, ներառյալ տեղեկատվական արշավները, հարցաթերթիկների և հարցազրուցավարների հրահանգերի

տպագրումը, հարցազրուցվարների ընդունումը և այլ աշխատանքներ պետք է իրականացվեին երեք ամիսների ընթացքում, որը նույնիսկ ներառում է արձակուրդային ժամանակահատվածի հիմնական մասը:

Առավել որակյալ արդյունքներ ունենալու համար, ավելի շատ ժամանակ է անհրաժեշտ Գյուղատնտեության համատարած հաշվառման պլանավորման և նախապատրաստական աշխատանքների համար, կատարյալ կլինի ունենալ մեկ տարի նվազագույն ժամանակահատած, բայց առնվազն նվազագույն այն ժամանակահատվածը որն անհրաժեշտ կլինի դա 7-8 ամիս ժամանակահատվածն է: Սա ժամանակային առումով խելամիտ է և կնպաստի փոքր փորձնական համատարած հաշվառման իրականացմանը, որի ժամանակ կփորձարկվեն համատարած հաշվառման բոլոր կողմերը, և կիրականացվի պատշաճ քարոզար շավ, որը հարցազրուցավարների լավ ուսուցման հետ մեկտեղ, համարվում են հաջողված Գյուղատնտեսության համաարած հաշվառման կարևոր գործոնները:

Մարդահամարը կարևոր դեր է խաղումը երկու առումներով՝

Առաջինը այն է, որ Մարդահամարի արդյունքները կարող են օգտագործվել վիճակագրական համակցությունը որոշելու համար, որը կրկին, եթե անհրաժեշտ լինի բյուջետային նկատառումներով, կարող է օգտագործվել շերտավորված ընտրանք իրականացնելու համար, ինչպես նկարագրված է 3.1 բաժնում: Սակայն, դա բնականաբար հնարավոր է միայն այն դեպքում, եթե արդյունքները դեռևս վավերական համարվեն, և ԱՄՆ Գյուղդեպարտամենտի և ԵՄ –ի միջազգային փորձագետները խորհուրդ են տալիս, որ Գյուղատնտեսության համատարած հաշվառումը պետք է իրականացվի մինչև 2014 թվականը, եթե պետք է օգտագործվեն Մարդահամարի արդյունքները:

Երկրորդը, Մարդահամարի փորձը և ենթակառուցվածքները կրկին կարող են օգտագործվել ան պայմանով, եթե Մարդահամարից հետո չափազանց շատ ժամանակահատված անցած չլինի: Սրանք երկուսն էլ արժեք կունենան հետազոտության որակի հետ կապված և ծախսերի նվազեցման առումով: Համակարգչային տեխնիկայի օգտագործումը և որոշ չափով նաև Մարդահամարի համար մշակված ծրագրերի փոփոխությունները իրապես կարող են օգտակար լինել Գյուղատնտսության համատարած հաշվառման համար, եթե այն իրականացվի մինչև 2014 թվականից:

3.1 բաժնում նկարագրված 1-3 սցենարներից ծախսերի առումով Գյուղատնտեսության համատարած հաշվառման համար նվազագույնը կլինի 3-րդ սցենարը, որը խորհուրդ չի տրվում, եթե տվյալների հավաքագրումը չի իրականացվելու 2012 կամ 2013 թվականներին: Որքան վաղ տեղի ունենա տվյալների հավաքագրումը, այնքան ավելի լավ, քանի դեռ բավարար ժամանակահատված է հատկացված քարոզարշավին և պլանավորման փուլի այլ կողմերին:

3.3 Այլ բյուջետային հարցեր

Գյուղատնտեսության համատարած հաշվառման առկա բյուջեն հիմնված է կարճ ինտենսիվ տվյալների հավաքագրման ժամանակահատվածի վրա: Բոլոր միջազգային փորձագետները առաջարկում են *ընդլայնել տվյալների հավաքագրման ժամանակահատվածը*: Տվյալների հավաքագրման ժամանակահատվածը ընդլայնելով, օրինակ է 10-ից այն դարձնելով 30 օր, ընդհանուր ծախսերը որոշ չափով կնվազեն, քանի որ հարցազրուցավարների քանակը (և հարցազրույցի ղեկավարների քանակը) կնվազի 25-30 տոկոսով: Բնականաբար, այս հարցազրուցավարներից յուրաքանչյուրը ավելի շատ կվճարվի ավելի շատ աշխատելու դեպքում, ուստի ընդհանուր ծախսերի նվազեցումը պետք է ակնկալել հետևյալից՝

1. Ընտրված հարցազրուցավարները կլինեն լավագույնը և առավելագույնս կհամապատասխանեն այդ աշխատանքին:

2. Յուրաքանչյուր հարցազրուցավար տվյալների հավաքագրման ժամանակահատվածի ընթացքում կդառնա ավելի արդյունավետ, այսինքն օրվա ընթացքում կկարողանա վարել ավելի շատ թվով հարցազրույցներ;

3. Հարցազրույցների որակը աստիճանաբար կբարելավվի տվյալների հավաքագրման ժամանակահատվածի ընթացքում, որը կնվազեցնի ստուգումներ կատարելու անհրաժեշտությունը (ֆերմերների հետ կրկին կապ հաստատելու անհրաժեշտությունը), և հետևաբար նաև ծախսերը:

4. Ավելի քիչ թվով հարցազրուցավարներ կարիք կունենան վերապատրաստման:

ԵՄ և ԱՄՆ Գյուղեպարտամենտի փորձագետների կողմից հաշվարկվել է, որ նշված սցենարի համար (1), ծախսերը կնվազեն մոտավորապես 0.5 միլլիոն ԱՄՆ դոլլարի չափով, եթե ընդլայնվի տվյալների հավաքագրման ժամանակահատվածը:

Բյուջեյի մեծ մասը վերցված է հարցազրուցավարների և այլ աշխատակիցների աշխատավարձերից և սոցիալական ապահովագրման ծախսերից: Ուստի, ակնհայտորեն բյուջեյի այս մասը պետք է ընդհանուր առմամբ մանրակրկիտ վերլուծության ենթարկվի, և դա վերաբերվում է ոչ միայն տվյալների հավաքագրման ժամանակահատվածին:

Ավելին, առկա բյուջեյում, բյուջեյի որոշ մասեր անհրաժեշտ է մանրամասն մեկնաբանել: Սա մասնավորապես վերաբերվում է բյուջեյի հետևյալ կետերին՝

1. Տնտեսական, գովազդային և գրասենյակային ծախսեր
2. Գործուղումներ
3. Հիմնական միջոցների ձեռք բերում
4. Այլ ծառայությունների ձեռք բերում

Առկա բյուջեյում, բյուջեյի նշված չորս կետերը կազմում են ընդհանուր բյուջեյի մոտավորապես 30 տոկոսը: Մասնավորապես պետք է նշել, որ <<Հիմնական միջոցների ձեռք բերումը>>, որը

ընդհանուր բյուջեյի մոտ 8 տոկոսն է կազմում, վերաբերվում է հիմնականում համակարգիչներին, և եթե Գյուղատնտեսության համատարած հաշվառումը իրականացվի մինչև 2014 թվականը, ապա բյուջեյի այս կետը զգալիորեն կնվազի:

4. Եզրակացություն

Հայաստանը ներկայումս գտնվում է աշխարհում այն քիչ թվով պետությունների շարքում, որոնք դեռևս չեն իրականացրել Գյուղատնտեսության համատարած հաշվառում: Սակայն, ինչևէ, Հայաստանը չպետք է Գյուղանտեսության համատարած հաշվառում իրականացնի միայն այն պարզ պատճառով, որ մյուս երկրները դա իրականացրել են: Հայաստանը պետք է իրականացնի Գյուղատնտեսության համատարած հաշվառում, ինչպես ամրագրված է 2008 թվականի օրենքում, քանի որ այն չափազանց կարևոր տեղեկատվությունը, որը վերաբերվում է Հայաստանի գյուղատնտեսական ոլորտի կառուցվածքներին, հնարավոր է միայն ստանալ Գյուղատնտեսության համատարած հաշվառման միջոցով:

Հաշվի առնելով բյուջեյի այն խիստ սահմանափակումները, որը ներկայումս առկա է Հայաստանի Հանրապետության Կառավարությունում, հատկապես Հայաստանում 2008 թվականի ֆինանսական և տնտեսական ճգնաժամից հետո, առավել նախընտրելի է փնտրել համեմատաբար քիչ ծախսատար լուծումներ:

Այդ իսկ պատճառով, նաև վերջնական վիճակագրական արդյունքների որակի առումով, ԵՄ և ԱՄՆ գյուղդեպարտամենտը խորհուրդ են տալիս Հայաստանի հանրապետության կառավարությանը կայացնել այդ կարևոր որոշումը և իրականցնել Գյուղատնտեսության համատարած հաշվառումը ամենաուշը 2013 թվականին, որպեսզի հնարավոր լինի օգտագործել Մարդահամարի ենթակառուցվածքները և տվյալները:

Որքան շուտ իրականացվի Գյուղատնտեսության համատարած հաշվառումը, այնքան ավելի քիչ ծախսատար այն կլինի, և Հայաստանի հանրապետությունը և Հայաստանի բնակչությունը շուտով կվայելեն դրա արդյունքները: